Այս համարում

Հայերեն բաժին

1- Թեմական Խորհուրդը ինչո՞ւ է անտեսում…1

2- ԳՈՒՅԺ–Ավիավքար…….....2

3- Լուրեր – Հայաստան……..……..……...……6

4- Լուրեր – Իրան……..……..……..……...……9

5- Լուրեր – Սփյուռք ..……...……...……...……9

6- Հասարակական……11

7- Խոհեր ...……...……....……20

8- Մշակույթ ….……..……...….20

Պարսկերեն բաժին

1- Լուրեր- Իրանահայ համայնք 1

2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2

Շապիկի առաջին էջում՝

Ավիավքարի զոհ՝ Հասարակական-մշակութային գործիչ Մասիս Մաթյան

վերջին էջում՝

Ավիավքարի զոհ՝ Էդվարդ Խաչիկ(յան), եւ մայրը Նանա Անթաշյանը , վթարի վայր

Համար 152, Հուլիս 2009թ.

No. 152, July 2009

ماهنامه لویس – شماره ۱۵۲ امرداد ماه ۱۳۸۸

Թեմական Խորհուրդը Ինչո՞ւ է անտեսում իրանահայ մամուլը

Վերջերս Թեհրանում տեղի են ունեցել մի շարք երևույթներ, որոնցից կարելի է թվարկել հետևյալները՝ Իրանահայության հանդիպումը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, Հայաստան-Սփյուռք գործակցության հայեցակարգի քննարկման սեմինար, Իրանի նախագահական ընտրությունների թեկնածուների կամ նրանց ներկայացուցիչների հետ մեր համայնքի հարցերի քննարկում Ազգային Առաջնորդարանում և այլն: Այս բոլոր միջոցառումներին բացառությամբ «Ալիք» օրաթերթից, իրանահայ մամուլի մյուս ներկայացուցիչները հրավիրված չեն եղել:

Վերոհիշյալ հարցի շուրջ տեղյակ են պահել Թեմական Խորհրդին ու ԹՀԹ-ի բարեխնամ Առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանին, դժբախտաբար, նրանք նաև կիրառել են քաջ լռության քաղաքականությունը, որը չի համապատասխանում նրանց արտահայտած ճառերին թափանցիկության ու մեր առաքելական եկեղեցու ժողովրդավար լինելու հետ:

Այստեղ հիմնականում անտեսվում են դաշնակցությանը չհարող մամուլը՝ «Հույս» երկշաբաթաթերթը, «Լույս», «Արաքս» և «Հանդես» պարբերականները: Այս թերթերի ներկայացուցիչների մեծ մասը ներկա են եղել բոլոր այդ միջոցառումներին և ըստ իրենց հասարակական կարգավիճակի, ապագայում ևս ներկա կլինելն, սակայն մեզ պարզ չէ, թե ինչու Հարգարժան Սրբազան Հայրը և Թեմական Խորհուրդը չեն ուզում հարգած լինեն իրանահայ մամուլի բոլոր ներկայացուցիչներին: Հույսով ենք նրանք կպարզեն և համապատասխան եզրակացություն անելով՝ բացատրություններ կտան համայնքին:

Համայնքում յուրաքանչյուր մտավորական կամ խումբ իր ենթադրությունը ունի այս կապակցությամբ և արդեն բացահայտորեն արտահայտվում են: Հարգալից կլինի, որ Սրբազան Հոր և ԹԽ-ի ներկայացուցիչը հրավիրի իրանահայ մամուլի ներկայացուցիչներին ու մտերմաբար այդ հարցի կապակցությամբ երկխոսություն ծավալի: Սա կլինի համայնքի շահերից, հակառակ դեպքում՝ խորթությունը ավելի կխորանա: Հայաստանում Երևան քաղաքի քաղաքապետի ընտրություններում ՀՅԴ-ի թեկնածուն մյուս թեկնածուներին միշտ երկխոսության կոչ էր անում, թող մեր կուսակցական ընկերները, ընդօրինակելով նրանց կարևորեն երկխոսության անհրաժեշտությանը:

Վերոհիշյալ հարցը միայն այդ թերթերին չի վերաբերում, այլ ողջ մեր համայնքի սրտցավ անդամների հարցն է, թե՝ ինչո՞ւ է անտեսվում, առանց այն էլ, մեր համայնքի խղճուկ մամուլի աշխարհը:



Այսու մեր վշտակցությունն են հայտնում Թեհրան-Երեւան չվերթն իրականացրած ինքնաթիռի ողբերգական վթարի կապակցությամբ եւ խորապես ցավակցում ենք անմեղ զոհերի հարազատներին ու ընկերներին:

«Լույս» ամսագրի եւ «Ապագա» հանդեսի խմբագրություն

ԳՈՒՅԺ

ԹԵՀՐԱՆ-ԵՐԵՎԱՆ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՎԹԱՐԻՑ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՑ 45-Ը ՀԱՅ Է ԵՂԵԼ

Երեկ Հուլիսի 15-ին Caspian Airlnes ընկերությանը պատկանող Թեհրան-Երեւան ավիաչվերթն իրականացնող «Տու-154» ինքնաթիռը վթարի է ենթարկվել, որի հետեւանքով զոհվել են ինքնաթիռի 153 ուղեւորներն ու 15 հոգուց կազմված անձնակազմը: Վթարը տեղի է ունեցել, տարբեր տեղեկություններով, թռիչքից 16-20 րոպե հետո, 11:30-ին մերձ ժամանակահատվածում ինքնաթիռն ընկել է Թեհրանից 180 կմ հեռավորության վրա գտնվող Ղազվին նահանգի Զենեթաբադ քաղաքին մերձակա բնակավայրերից մե կի մոտ: 40 ուղեւոր հայ է եղել, նրանցից 5-ը, ըստ քաղավիացիայի վարչության պետի տեղակալ Արսեն Պողոսյանի՝ ՀՀ քաղաքացի. Աշոտ Ներսիսյան, Արթուր Գրիգորյան, Կարինե Մարգարյան, անձնակազմի անդամներ Գրիգոր Բարսեղյան, Սուրեն Սողոմոնյան: 35 հայազգի այլ երկրների քաղաքացիներ են եղել: Ի դեպ, ինքնաթիռում է եղել նաեւ Թեհրանի հայկական համայնքների ընկերակցության ղեկավար Լեւոն Դավթյանը, որն ավելի վաղ Իրանի խորհրդարանի պատգամավոր էր: Այս ինքնաթիռով Հայաստան էին ժամանում Իրանի ձյուդոյի պատանեկան հավաքականի անդամները, որոնք նույնպես զոհվել են: Ինքնաթիռում եղել է նաեւ երկու երեխա: Վրաստանի երկու զոհված քաղաքացիները եղել են Հայաստանում Վրաստանի դեսպանատան աշխատակից Գիվի Չկադուան եւ Թեհրանում Վրաստանի դեսպանատան ղեկավարի կինը՝ Նաթելա Նիկոլավան:

Վթարի հնարավոր պատճառների մասին դեռեւս ոչինչ չի հաղորդվում: Caspian Airlnes ավիաընկերության երեւանյան գրասենյակի ներկայացուցիչները հղում են անում սեւ արկղերում եղող տեղեկատվությանը՝ երբ այն վերծանվի, այդ մասին գուցեեւ ինչ-որ բան իմանանք: Թեեւ տարբեր լրատվամիջոցներում չճշտված տեղեկություններ էին հայտնվել, թե ինքնաթիռի շարժիչներից մեկում հրդեհ է բռնկված եղել:

Փաստորեն՝ «Տու-154»-ը իր նախատեսված ժամից մեկ ժամ ուշ է թռիչքն իրականացրել, սակայն պաշտոնապես որեւէ իրավասու ատյան դեռ չի հայտնում դրա պատճառը: Հայաստանի քաղավիացիայի վարչությունում վթարի մասին հայտնի է դարձել հայ դիսպետչերներից, որոնք իրանցի գործընկերներից տեղեկացել են, որ իրենց տեսադաշտում ինքնաթիռը չի երեւում: Ինքնաթիռը Հայաստանում պետք է վայրէջք կատարեր ժամը 13-ից 8 րոպե պակաս:

Ինքնաթիռի տեխնիկական տվյալներին հայկական կողմը չի տիրապետում՝ իրանական կողմն է դրա պատասխանատուն: Պատճառների հետաքննությանը հայկական կողմը հազիվ թե մասնակցի, քանի որ միջազգային պայմանագրերով դրա իրավունքը չունի:

Ինքնաթիռն ապահովագրված է եղել

Իրանի նախագահը, որ ցավակցություն է հայտնել զոհվածների հարազատներին եւ Իրանի ժողովրդին, կոչ է արել արագ հետաքննություն իրականացնել, պարզել վթարի պատճառները:

Ղազվինի փոխնահանգապետ Սիրուս Սաբերին երեկ հայտարարել է, որ Իրանի համապատասխան կառույցները որոնում են վթարված ինքնաթիռի սեւ արկղերը:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը երեկ դադարեցրեց իր աշխատանքային այցելությունը Սպիտակ՝ քաղաքի օրվա առթիվ, եւ շտապ վերադարձավ Երեւան:

Ավիավթարի առիթով երեկ նախագահ Սարգսյանը հրավիրեց արտակարգ խորհրդակցություն, որը նախ տեղեկատվական էր՝ ոլորտի մասնագետները ներկայացրել են իրենց հայտնի տեղեկատվությունը վթարի վերաբերյալ: Ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի գլխավորությամբ, որը եւ երեկ հրավիրեց իր առաջին նիստը: Հանձնաժողովը երեկ հանձնարարեց քաղավիացիայի վարչությանը՝ զոհվածների հարազատների հետ քննարկել հուլիսի 17-ին Իրան մեկնելու եւ դեպքի վայր այցելելու հնարավորությունը: Հանձնարարվել է շահագրգիռ բոլոր մարմիններին՝ զոհվածների հարազատներին կազմակերպական, առողջապահական եւ հոգեբանական աջակցության խնդրի առումով անհրաժեշտ պատրաստվածության մակարդակ ապահովել: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին էլ հանձնարարվել է առաջարկություն պատրաստել՝ զոհվածների ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցույց տալու համար:

Երեկ օրվա վերջում հայտնի դարձավ, որ Թեհրան-Երեւան չվերթի ինքնաթիռի վթարի հետեւանքով մարդկային բազմաթիվ զոհերի, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների եւ հայազգի անձանց զոհվելու առթիվ նախագահ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել այսօր սգո օր հայտարարելու մասին: Նախագահ Սարգսյանի ուղերձում ասված է. «Մենք չենք կարող հետ բերել կորուստները եւ մեր զորակցությունն ենք հայտնում զոհվածների հարազատներին եւ մերձավորներին: Հայաստանի իշխանությունն այսօր անում է հնարավորը՝ օգնելու նրանց այս ծանր պահին: Դժվար է սփոփանքի ու մխիթարանքի խոսքեր գտնել մարդկանց համար, ովքեր հարազատ են կորցրել: Այս մեծ ողբերգությունը հաղթահարելու համար մաղթում եմ ոգու կորով եւ արիություն»:

ՀՀ ԱԳՆ-ում բացվել է թեժ գիծ, տեղեկատվություն կարելի է ստանալ 562543, 37410566811 եւ +37410544041 (ներքին 202 կամ 217) հեռախոսահամարներով: «Caspian airlines» ինքնաթիռի ավիավթարի զոհերի ցուցակը տեսնել ներքեւում.

1.Համիդ Ռեզա Աբդոլլա Զադե
2. Ահմադինորրեհ Արամ
3. Աջանդ Անետտ
4. Աքբարի Ղասեմ
5. Ալաի Մարիամ
6. Ալավիշիրխո
7. Ալիմոհամմադի Ահմադ
8. Ալիմոհամմադի Արաշ
9. Ալիմոհամմադի Ալիաքբար
10. Ալիմոհամմադի Քավեհ
11. Ալիռեզաի Մանիժեհ
12. Ալիռեզաի Մոջդեհ
13. Ամինալավի Անահիտա
14. Ամիրի Ալի
15. Անթաշյան Նանա
16. Ասադորյան Էդվին
17. Ավաքյան Արդաշիր
18. Ավանեսսյան Ազադ
19. Ազիզոլլահի Մոսավեր
20. Բաբումյան Անուշ
21. Բաղերփուր Յահյա
22. Բահրամի Ալի
23. Բանա Հոսսեյն
24. Բարֆորուշան Մեհդի
25. Բեհեշթինեջա
26. Բողոզյանս Աննա
27. Բոհլուլի Ռոյա
28. Դավիդյան Լեւոն
29. Դեհղանինիա Վահիդռեզա
30. Դերավանեսյան Մարտիկ
31. Էբրահիմիդոլո Վահիդ
32. Էհյա Դարյուշ
33. Էստեփանյան Նաիրի
34. Էստեփանյան Շողեր
35. Ֆալարզփուր Ջամշիդ
36. Ֆալլահզադեհ Մորթեզա
37. Ֆարաջզադեհ Ռաշիդ
38. Ֆազայելմոհամ Մոհսեն
39. Գարանյան Մելինե
40. Ղաֆուրիսիահ
41. Ղեզավաթ Ալի
42. Ղոլամհոսեյն Նեդա
43. Ղոլոբի Հասան
44. Ղոլոհանհաֆթ Հասմակ
45. Ղուկասյանս Կարաբդ
46. Գիվի Չկադուա
47. Գրիգորյան Արթուր
48. Հադդադի Մոհամմադ
49. Հադիխանհերս Արյան
50. Հադիխանհերս Ա.Մ.
51. Հաղփարասթսե Ղոլամռեզա
52. Հաղփարասթսե Ասդելեհ
53. Հասսանզադեհ Հասսան
54. Հայրոփթիովսե Լորիկ
55. Հոսսեյնի Սեյյեդմահդի
56. Իզադջու Մոհամմադ
57. Ջաֆարի Ջավադ
58. Ջաֆարի Յաղուբ
59. Ջալալի Մաջիդ
60. Ջավանբախշ Վահիդ
61. Ջավանռաշխա Համիդ
62. Ջազայերի Սեյեդմոհհամադ
63. Ջազայերի Սեյեդշահան
64. Ջազայերի Սեյեդռահամ
65. Կակվանդի Մոհամմադռեզա
66. Կարապետյանմա Թալինե
67. Քարիմի Նաոիա
68. Քարիմի Նիլուֆար
69. Քարիմի Նիմա
70. Քարիմի Հոսեյն
71. Քաշանիղարա
72. Քերմանիմոախ Ահմադ
73. Խաբազքարֆոմ Ամին
74. Խաչիկ Էդվարդ
75. Խավանինզադեհ Հասսան
76. Խեյրաթիրուն Ալի
77. Խերադի Ահմադռեզա
78. Խունգարմխոհ Հոմա
79. Լաշգարի Ալիռեզա
80. Լոթֆիֆարդ Ռոյա
81. Մահմուդիզադեհ
82. Մաիլյան Նաիրի
83. Մանասերյան Արշավիր
84. Մարգարյան Կարինե
85. Մաթյանկոնարա Մասիս
86. Մելքոմաբքար Անի
87. Մելքոմաբքար Արին
88. Մուալեմիանգո Մեղդադ
89. Մոհադեսեդիգ Ալի
90. Մոհամմադի

91. Մոհամմադիխա Ղոլամռեզա
92. Մոհամմադսաֆա Ֆաթեմեհ
93. Մոխթարիհաջ Բաբաք
94. Մորադյանհաջի
95. Մոզաֆարիաղդ
96. Նայեմ Նազիլա
97. Նաջաֆիլահիջի Սադեղ
98. Նավասարդյանթ Ալվարդ
99. Նազարիշաքիբ
100. Ներսիսյան Աշոտ
101. Նիաղի Հադի
102. Նիավարանի Սեյեդֆարդադ
103. Նիքնամ Աբբաս
104. Նիկոնովա Նաթելա
105. Նորոզփուրշո Մոհսեն
106. Նոսրաթի Նասսեր
107. Փեյդարեսի Էբրահիմ
108. Փուլադիղալե Համասփուր
109. Փուրղորբանի Ալիռեզա
110. Փուրմողադամ
111. Ռաֆիեմանսու
112. Ռասուլի Սահիդ
113. Ռեյհանի Մեհդի
114. Սաբաղի Մոստաֆա
115. Սաբուրի Շահնամ
116. Սալարիան Դավուդ
117. Սալեհի Արիան
118. Սալեհի Սաեիդ
119. Սամարղանդիս
120. Սամարղանդիս
121. Սանաեի Մոհամմադ
122. Սարքեզիանս Արմեն
123. Սարքեզիանս Վահե
124. Սերքիսիան Արմեն
125. Սեյեդալիռութ
126. Շադխու Մասումե
127. Շահբազիանսա Ժորժիկ
128. Շահմորադիան
129. Սիմոխաչիկի
130. Սիմոնիանղալ Խաչխաթուն
131. Սիրաթի Փարհամ
132. Սիրոյան Արա
133. Սոլեյմանիֆար Ամին
134. Սոլթանմոհամ Ալի
135. Սուքիազյանհա Զարմինե
136. Թահմասիան Վարդանուշ
137. Թարսինիան Լուսիկ
138. Թարույանս Ռամուն
139. Թերհովհաննեսի Քրիստինե
140. Թերհովհաննեսի Անահիտափթալի
141. Թեյմուրի Նասեր
142. Թիմաշ Թադե
143. Վաթանփարասթ Սիավաշ
144. Յաղոաբիմասս
145. Յաղոաբիմասս
146. Յամինի Աբդոլռեզա
147. Յուսեֆի Ռեզա
148. Զարեան Ալաե
149. Զարեան Հեսամ
150. Զարեան Թարլան
151. Զարիֆմահմուդ
152. Զեբարդասթբար
153. Զեյնիվանդնեժ

ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել ԻԻՀ Նախագահ Մ.Ահմադինեժադի հետ

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր հեռախոսազրույց է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, Նախագահ Սարգսյանն Իրանի իր պաշտոնակցին ցավակցել է տեղի ունեցած ավիավթարի հետեւանքով մեծ թվով Իրանի քաղաքացիների զոհվելու կապակցությամբ: Իր հերթին Նախագահ Մահմուդ Ահմադինեժադը ցավակցել է իր հայ գործընկերոջը:

Նախագահները պայմանավորվել են ավիավթարի պատճառների ուսումնասիրման եւ անհրաժեշտ քայլերի իրականացման հարցում երկու երկրների համապատասխան գերատեսչությունների գործակցությունը համակարգելու վերաբերյալ:

ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանը ցավակցական խոսք է հղել Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռի կործանման կապակցությամբ

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանը ցավակցական խոսք է հղել Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռի կործանման կապակցությամբ:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, ուղերձում ասվում է.

«Սիրելի հայրենակիցներ,

Խոր վշտով տեղեկացա Թեհրան- Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռին պատուհասած աղետի մասին: Տեղի ունեցած ողբերգությունը խլել է բազմաթիվ կյանքեր, եւ որքան էլ ծանր է բոլորիս կորուստը, մենք պետք է կարողանանք ուժ գտնել՝ միասնաբար կրելու այս մեծ վիշտը:

Իմ զորակցությունն ու խորին ցավակցությունն եմ հայտնում բոլոր զոհվածների հարազատներին ու մերձավորներին: Հավատացած եղեք, որ մենք ձեր կողքին ենք եւ անելու ենք հնարավորը՝ ձեր ցավը մեղմելու համար»:

Ստեղծվել է հանձնաժողով՝ ավիավթարի հետեւանքով զոհված ՀՀ քաղաքացիների հուղարկավորության եւ նրանց ընտանիքներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու նպատակով

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ 2009թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած ավիավթարի հետեւանքով զոհված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հուղարկավորության եւ նրանց ընտանիքներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով՝ ՀՀ փոխվարչապետ, ՀՀ

տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի նախագահությամբ:

Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ցավակցական խոսք է հղել Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռի կործանման կապակցությամբ

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ցավակցական խոսք է հղել Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռի կործանման կապակցությամբ: Ցավակցական խոսքում ասված է.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր դիմում եմ ձեզ ցավալի առիթով. ժամեր առաջ վթարի է ենթարկվել Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող օդանավը: Ըստ տվյալների՝ աղետին զոհ են գնացել ինքնաթիռի բոլոր ուղեւորներն ու անձնակազմի անդամները: Զոհերի թվում են նաեւ մեր հայրենակիցները:

Մենք չենք կարող հետ բերել կորուստները եւ մեր զորակցությունն ենք հայտնում զոհվածների հարազատներին ու մերձավորներին: Հայաստանի իշխանությունն անում է հնարավորը՝ օգնելու նրանց այս ծանր պահին:

Դժվար է սփոփանքի ու մխիթարանքի խոսքեր գտնել մարդկանց համար, ովքեր հարազատ են կորցրել: Այս մեծ ողբերգությունը հաղթահարելու համար մաղթում եմ ոգու կորով եւ արիություն»:

Թեհրան- Երեւան չվերթն իրականացնող ՏՈՒ-154 ինքնաթիռի վթարի կապակցությամբ որոշվել է ստեղծել կառավարական հանձնաժողով

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:Թեհրան- Երեւան չվերթն իրականացնող ՏՈՒ-154 ինքնաթիռի վթարի կապակցությամբ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր հրավիրել է արտակարգ խորհրդակցություն:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ Նախագահի մամլո գրասենյակից, Ազգային անվտանգության ծառայության եւ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության ղեկավարները ներկայացրել են ինքնաթիռի վթարի հետ պակված մանրամասները:

Որոշվել է փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի գլխավորությամբ ստեղծել կառավարական հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականի հուլիսի 16-ը հայտարարվել է սգո օր

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:2009թ-ի հուլիսի 15-ին տեղի ունեցած ավիավթարի ժամանակ բազմաթիվ մարդկային զոհերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ հայազգի անձանց զոհվելու կապակցությամբ Նախագահ Սերժ Սարգսյանը հուլիսի 15-ին հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականի հուլիսի 16-ին սուգ հայտարարելու մասին:

Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խորին վշտով ընդունեցինք Թեհրան-Երեւան չվերթի ինքնաթիռի վթարման բոթը: Վթար՝ որը պատճառ դարձավ մեծաթիվ զոհերի: Ռուսաստանի հայերի միությունը խորապես վշտացած է: Միության վարչության եւ իմ անունից խորին ցավակցություն եմ հայտնում զոհերի հարազատներին եւ ընկերներին: Ռուսաստանի հայերի միությունը պատրաստ է իր օգնությունը տրամադրելու՝ ամոքելու համար վիշտը զոհվածների ընտանիքների:

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ռուսաստանի հայերի միության նախագահ

Ցավակցական
Մեր խորին վշտակցությունն ենք հայտնում Իրան-Հայաստան Բարեկամության Միության վարչության անդամ՝ Հենրիկ Խալոյանին, իր ընտանիքին ու հարազատներին օդանավի վթարի հետևանքով, Տիկ. Լուսիկ Վարդանյան (Դարբինյան) մահվան կապակցությամբ:

Իրան-Հայաստան Բարեկամության Միություն

Ցավակցական
Մեր խորին վշտակցությունն ենք հայտնում Թեհրան-Երևան թռիչքի արկածի բոլոր 168 զոհվածների ընտանիքներին, իրանահայ համայնքի բոլոր անդամներին ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության

Իրան-Հայաստան Բարեկամության Միություն

Հայաստան բերվեցին Թեհրան-Երեւան չվերթն իրականացրած ինքնաթիռի վթարի զոհերի մասունքները

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թեհրան-Երեւան չվերթով այսօր՝ տեղական ժամանակով ժամը 12:00-ին, հատուկ սափորներով Հայաստան փոխադրվեցին հուլիսի 15-ին տեղի ունեցած ավիավթարի հետեւանքով զոհված ՀՀ հինգ քաղաքացիների՝ Արա Սիրոյանի, Սուրեն Սողոմոնյանի, Գրիգոր Բարսեղյանի, Կարինե Մարգանյանի եւ Աշոտ Ներսիսյանի մասունքները:

Օդանավակայանում զոհվածների հարազատներին դիմավորեցին ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ Արտյոմ Մովսիսյանը, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանը, օպերատիվ շտաբի անդամները, եկեղեցու սպասավորներ: Օդանավակայանի «Կարգո» համալիրում հոգեւոր հայրերը մատուցեցին հոգեհանգստի արարողություն:

Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանը նշեց, որ այս աշխատանքներն համակարգելու նպատակով ստեղծված կառավարական հանձնաժողովն իր առջեւ դրված պարտականությունները կատարում է, տուժած յուրաքանչյուր ընտանիքի հատկացված է 1.5 մլն դրամ: Երեւանի քաղաքապետարանին ՀՀ կառավարությունը հատկացրել է 678 հազ. դրամ՝ բնակչության հատուկ սպասարկման կենտրոնին փոխանցելու նպատակով: Քաղաքապետարանի կողմից տրամադրվել են դագաղներ եւ դիատար մեքենաներ, գերեզմանատներում

տարածքների հատկացման հարցը քաղաքապետի հանձնարարությամբ լուծվել է: Զոհվածներից երեքը Երեւանի Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն եւ Աջափնյակ վարչական շրջաններից են, երկուսը՝ Արմավիրի մարզից: Երեւանի քաղաքապետի հանձնարարությամբ զոհվածների հարազատներին եւ դիատար մեքենաներին պետք է դիմավորեն համապատասխան վարչական շրջանների ղեկավարները եւ կազմակերպական բոլոր հարցերը լուծեն: Ըստ Կ.Արեյանի՝ առայժմ զոհերի հիշատակին նվիրված հուշաքար տեղադրելու հարց չի քննարկվում:

Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող «Կասպյան» ավիաուղիների ներկայացուցիչ Արմեն Դավիդյանը նշեց, որ օդանավն ու բոլոր ուղեւորները սահմանված նորմերով ապահովագրված են եղել: Այժմ կատարվում են աշխատանքներ փոխհատուցման ուղղությամբ: Կործանված ինքնաթիռի տեխնիկական անսարքության մասին հարցին ընկերության ներկայացուցիչը չպատասխանեց՝ նշելով, որ ուսումնասիրություններից հետո համապատասխան եզրակացություններ կտան մասնագետները:

Ըստ Ա.Դավիդյանի՝ իրենց ավիաընկերությունը պատկանում է միայն իրանական կողմին եւ սերտորեն համագործակցում է ռուսական համապատասխան կառույցների հետ: Մասնագետը նաեւ տեղեկացրեց, որ «ՏՈՒ 154» ինքնաթիռները նախատեսված են 25-30 տարվա շահագործման համար:

Հոգեհանգիստ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

ԷՋՄԻԱԾԻՆ, 18 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվել է հոգեհանգստյան արարողություն Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռի վթարի հետեւանքով զոհվածների հոգիների խաղաղության համար:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Մայր Աթոռի մամլո դիվանից, արարողության ընթացքում ներկաներին իր ցավակցական խոսքն է ուղղել Վեհափառ Հայրապետը:

«Խորը վշտով են համակված մեր հոգիները: Թեհրան-Երեւան օդանավի չարաբաստիկ աղետը մարդկային շատ կյանքեր խլեց: Ցավ է մեզ, որ բազմաթիվ մարդկանց երկրավոր կյանքի ընթացքը ավարտվեց ողբերգական իրադարձությամբ: Այսպիսի դժվարին պահերին եւս մենք մեր աղոթքներն ենք բարձրացնում առ Աստված, ինչպես ասում է սաղմոսերգուն. «Ձնեղություն եւ զանձկություն գտի եւ զանուն Տեառն կարդացի»: Հայցում ենք, որ Բարձրյալ Տերը մխիթարի մեզ ցավի եւ տրտմության մեջ, զորակից լինի՝ հաղթահարելու անդառնալի կորստի կսկիծը»,- նշել է Նորին սրբությունը:

Հայոց Հայրապետը նաեւ իր ցավակցությունն ու սրտակցությունն է հայտնել զոհվածների բոլոր հարազատներին, Իրանի, Վրաստանի իշխանություններին եւ ժողովուրդներին՝ աղոթելով, որ Տերը խաղաղության մեջ հանգստություն ու երանություն պարգեւի հանգուցյալների հոգիներին եւ Սուրբ Հոգու շնորհներով մխիթարի եւ սփոփի սգակիր բոլոր սրտերը:

Հոգեհանգստին մասնակցել են ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, կառավարության անդամներ, ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սաղայանը, Մայր Աթոռի միաբաններ, զոհվածների հարազատներ:

Հայաստան

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Գ. Առաքելյանը նշանակվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հուլիսի 7-ին հրամանագիր է ստորագրել Կարեն Նազարյանին Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններից ազատելու մասին:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նույն օրվա մեկ այլ հրամանագրով Գրիգոր Առաքելյանը նշանակվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Թեհրան):

Գրիգոր Առաքելյանի կենսագրական տվյալները Ծնվել է 1948 թ. մարտի 14-ին Իրանի Թավրիզ քաղաքում:

Ավարտել է Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի իրանագիտության բաժինը 1975 թ.:

Գործուղվել է Աֆղանստան՝ որպես թարգմանիչ,1975-1979 թթ.:

Աշխատել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում՝ որպես գիտաշխատող, 1980-1991 թթ.:

Աշխատանքի է ընդունվել ՀՀ ԱԳՆ՝ 1992թ.:

ՀՀ ԱԳՆ Մերձավոր եւ Միջին Արեւելքի Իրանի բաժնի վարիչ՝ 1992-1996 թթ.:

Իրանում ՀՀ դեսպանության խորհրդական՝ 1996-1999 թթ. :

ՀՀ ԱԳՆ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների վարչության պետ՝ 1999-2001 թթ.:

ՀՀ ԱԳ նախարարության աշխատակազմի խորհրդական՝ 2004 թ.:

Իրանում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարար՝ 2007-2009 թթ.:

ՀՀ ԱԳ նախարարի խորհրդական:

Պատմական գիտությունների թեկնածու՝ 1990թ.:

Ունի արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան:

Տիրապետում է ռուսերեն, պարսկերեն (դարի), թուրքերեն եւ անգլերեն լեզուներին:

Ամուսնացած է. ունի երկու զավակ:

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ վերընտրվելու առիթով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Մահմուդ Ահմադինեժադին

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ վերընտրվելու առիթով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Մահմուդ Ահմադինեժադին:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, ուղերձում մասնավորապես ասված

է.

«Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ վերընտրվելու առիթով Հայաստանի Հանրապետության ժողովրդի եւ անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ Իրանի բարեկամ ժողովրդին՝ մաղթելով նորանոր հաջողություններ եւ նվաճումներ:

Վստահ եմ, որ հետայսու եւս Ձեզ հետ միասին կշարունակենք մեր համատեղ ջանքերը՝ տարբեր բնագավառներում հայ-իրանական հարաբերությունները խորացնելու եւ ամրապնդելու ուղղությամբ: Դա է թելադրում մեր ժողովուրդների ավանդական փոխադարձ հարգանքը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ այս նշանակալից առիթով եւ մաղթում քաջառողջություն, երջանկություն եւ բեղմնավոր գործունեություն»:

Իրան-Հայաստան նավթատարի շինաշխատանքները կսկսվեն այս տարի

ԿԱՊԱՆ, 26 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրան-Հայաստան նավթամթերքի տեղափոխման խողովակաշարերի նախագծման եւ շինարարական աշխատանքները պետք է սկսվեն արդեն այս տարի: Այս մասին այսօր պատասխանելով «Արմենպրես»-ի հարցին՝ Սյունիքում սյունքիում լրագրողներին ասաց ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը: Ըստ նրա՝ ՀՀ նախագահի՝ Իրան կատարած այցի շրջանակներում ստորագրվել է համաձայնագիր, եւ հաջորդ շաբաթ Հայաստանից աշխատանքային խումբ կմեկնի Իրան՝ պայմանագրում վերջնական փոփոխություններ, հստակեցումներ մտցնելու եւ այն վերջնական տեսքի բերելու նպատակով: Դրանից հետ արդեն կսկսվեն շինախատանքները:

Նախարարի խոսքով՝ դա երկկողմ ներդրումային ծրագիր է, որը պետք է կյանքի կոչվի հայ-իրանական միջոցներով: Ծրագրին մասնակցելու հետաքրքրություն է ցուցաբերել նաեւ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն: Ծրագրի արժեքը մոտ 280 մլն դոլար է, խողովակաշարի թողունակությունը կկազմի տարեկան 1.5 մլն տոննա բենզին եւ դիզվառելիք:

Ներկայացվեցին ՀՀ-ում «Հյուսիս-Հարավ» երկաթուղային եւ արագընթաց ավտոմոբիլային ճանապարհների նախագծերը

ԵՐԵՎԱՆ, 2 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցով իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում «Հյուսիս-Հարավ» ավտոմոբիլային միջանցքի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքները: Ինչպես այսօր ՀՀ-ում «Հյուսիս-Հարավ» երկաթուղային եւ արագընթաց ավտոմոբիլային ճանապարհների նախագծերի ներկայացման ժամանակ նշեց ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանը, այս տարվա սեպտեմբերից պատրաստ կլինի վարկավորման առաջին փուլի տեխնիկատնտեսական հիմնավորումը, որով նախատեսվում է Աշտարակ-Գյումրի ավտոճանապարհի 88 կմ հատվածը դարձնել առաջին կարգի ավտոմայրուղի: Այն հնարավորություն կտա Հայաստանի երկու քաղաքների միջեւ ապահովել բարձրակարգ ավտոմայրուղային կապ, կրճատել ավտոմոբիլային հաղորդակցության համար պահանջվող ժամանակը եւ մեծապես կխթանի առեւտրատնտեսական կապերի զարգացմանը: Աշտարակ-Գյումրի ավտոճանապրհը «Հյուսիս-Հարավ» արագընթաց ավտոմոբիլային ընդհանուր ճանապարհի մի մասն է կազմում:

«Հյուսիս-Հարավ» երկաթուղային եւ արագընթաց ավտոմոբիլային ճանապարհների նախագծերը մշակվել է գերմանա-ավստրիական «ILF» խորհրդատվական ընկերության կողմից: Ընկերության գլխավոր տնօրեն Յոհան Բայերը նշեց, որ ճանապարհաշինության, երկաթուղիների եւ այլ բնագավառներում շուրջ 3 հազար 500 հաջողված ծրագրեր արդեն իրականացրել են: Գործունեություն ծավալել են Ռուսաստանում, Իրանում, Սաուդյան Արաբիայում:

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԻՆ

Հունիսի 27-ին էլեկտրոնային լրատվամիջոցներն ու հեռուստաընկերությունները հաղորդեցին, որ «Նաիրի» բժշկական կենտրոնում կյանքի 72-րդ տարում մահացել է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ գերաշնորհ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Հիշեցնենք, որ փետրվարի 18-ին Մայր աթոռի միաբանական կացարանում 17-ամյա երիտասարդը կողոպուտի նպատակով հարձակվել էր արքեպիսկոպոսի վրա, ծանր վնասվածք հասցրել, ինչի հետեւանքով Պոզապալյանին անգիտակից վիճակում տեղափոխել էին հիվանդանոց:

Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը ծնվել է 1937 թ.Կիլիկիայում, այնուհետեւ ընտանիքը գաղթել է Բեյրութ: Նախ սովորել է Նուբարյան հայկական վարժարանում, Անթիլիասի դպրեվանքում, այնուհետեւ՝ Բեյրութի կենտրոնական վարժարանում: Հայրենիք տեղափոխվել է 1957-ին եւ ուսումը շարունակել Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում: Նույն թվականին ձեռնադրվել է սարկավագ, 1962-ին Վազգեն Առաջինը նրան շնորհել է վարդապետական, իսկ 1965-ին՝ ծայրագույն վարդապետության աստիճան:

Պոզապալյանն այնուհետեւ ուսումը շարունակել է մի շարք եվրոպական նշանավոր համալսարաններում: 1974-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, իսկ 1982-ին՝ նշանակվել Մայր աթոռի դիվանապետ: 1986-ին Վազգեն Առաջին կաթողիկոսից ստացել է արքության պատիվ:

2000-2003 թթ. հոգեւոր գործունեության 40-ամյակի առիթով Կոտայքի շրջանի Թեղենիք գյուղում կառուցել է Սրբոց նահատակաց եկեղեցին, որի առթիվ Վեհափառ հայրապետը նրան պարգեւատրել է Հայ եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Ներսես Սրբազանը հրատարակել է 10 անուն բանաստեղծական եւ հոգեւոր ուղղվածության գրքեր: Պոզապալյանը կարդացել է դասախոսություններ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

Այսօր՝ առավոտյան ժամը 11-ին Թեղենիքի Սրբոց նահատակաց եկեղեցում կմատուցվի պատարագ, որի ընթացքում կկատարվի վերջին օծման եւ թաղման կարգը: Պատարագի ավարտին եկեղեցու բակում տեղի կունենա Սրբազանի հուղարկավորության արարողությունը:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ-ԱԶԳ

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵ՞Լ Է ԼՂՀ-ՈՒՄ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Ըստ Panarmenian.net-ի, Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները մոսկովյան հանդիպման ժամանակ քննարկել են Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի ճշտման հնարավոր հանրաքվեի անցկացման կարգը: Այդ մասին գրում է «Կոմերսանտ» թերթը՝ ՌԴ ԱԳՆ-ի հղումով: «Հայաստանն ու Ադրբեջանը դեռեւս համաձայնության չեն հասել կետերից եւ ոչ մեկի շուրջը», գրում է թերթը՝ նշելով, որ բանակցություններն ընթանում են փակ դռների հետեւում: «Կոմերսանտի» զրուցակիցները ՌԴ ԱԳՆ-ում հաղորդել են, որ առանցքային էին հակամարտող տարածաշրջանի բնակչության ինքնորոշման վերաբերյալ քվեարկության կարգի մասին հարցը եւ առաջարկվող «միջանկյալ կարգավիճակի» էությունը: Մադրիդյան սկզբունքների 4-րդ կետը նախատեսում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերջնական որոշում «կամքի արտահայտման միջոցով, պարտադիր իրավական հետեւանքներով»: Իսկ երկրորդ կետը հիշեցնում է, որ մինչ այդ Լեռնային Ղարաբաղը պետք է անցումային կարգավիճակ ունենա, որն, ինչպես մեկնաբանում են բանակցող կողմերը, «չի նվազեցնի Լեռնային Ղարաբաղի այսօր ունեցած ազատության ծավալը»:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՍԿՍԵՑ ԳՈՐԾԵԼ ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 9-ին ՀՀ պետռեգիստրը գրանցել է Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը՝ վկայական 03Ա 085552, գրանցման համարը՝ 211.172.05109: Հայաստանում Արմենական-ՌԱԿ-ի գրանցումը պատմական կարեւոր նշանակության իրողություն է, ինչն ազդարարում է ոչ միայն հայ ավանդական կուսակցության՝ ՌԱԿ-ի նոր զարթոնքը մայր հայրենիքում, այլեւ քաղաքական-գաղափարական հավասարակշիռ ուղղության՝ ժողովրդավարության եւ ազատականության տարածումն ու արմատավորումը:

Կուսակցության հիմնադիր համագումարից մոտ մեկ ամիս է անցել, սակայն այս ընթացքում կուսակցության հանդեպ նկատվում է մեծ հետաքրքրություն, ոչ միայն Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության նախկին անդամների, այլեւ ռամկավար-ազատական գաղափարախոսության ջատագովների ու համակիրների կողմից: Կուսակցությունը հանդես է գալիս Արմենական անունով, մատնանշելով իր կապը դեռ 124 տարի առաջ Վան քաղաքում ստեղծված Արմենական կուսակցության եւ նրա գաղափարախոսության հետ, ինչն առաջին փորձն էր հայ ազգային հզոր, միավորիչ քաղաքական ուժի ստեղծման: Եթե այն տարիներին նման կուսակցության ստեղծումը խորհրդանշում էր հայ ժողովրդի պայքարի եւ միավորման նոր ժամանակաշրջանը, ապա այսօր որդեգրելով այդ անունը մենք ձգտելու ենք Հայաստանը դարձնել իրական ժողովրդավարության եւ արդարության երկիր: Միաժամանակ, կուսակցությունը հնարավոր ամեն ինչ անելու է միավորելու սփյուռքում գործող Ռամկավար ազատական կուսակցության բոլոր շրջանակները եւ ՌԱԿ-ը դարձնելու հայաստանակենտրոն:

Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունն ի սկզբանե հայտարարում է Հայաստանում մի քաղաքական ուժի ստեղծման մասին, որը սկսելու է ձեւավորել նոր քաղաքական բեւեռ՝ իր շուրջը համախմբելու համար այն կազմակերպություններին, որոնք վճռական են երկրում համակարգային ու խորը փոփոխությունների սկզբնավորման համար:

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀՎԵՑ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՌԵԺԻՍՈՐԻ ՄՐՑԱՆԱԿԸ»

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը ընդունել է «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի մասնակից սփյուռքահայ կինոգործիչներին, ժյուրիի անդամներին, կինոարտադրողներին, կինոբեմադրիչներին ու դերասաններին: Նախարարը, ողջունելով հյուրերին, ներկայացրեց նախարարության գործունեությունն ու ծրագրերը, հայրենիք-սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունը: Բարձր գնահատելով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի դերը մեր մշակութային կյանքում, նախարարը հույս հայտնեց, որ ապագայում եւս այն իր ուրույն տեղը կունենա ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ աշխարհի հայ կինոգործիչների կյանքում:

Կինոփառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանն իր եւ փառատոնի մասնակիցների անունից շնորհակալություն հայտնեց Հրանուշ Հակոբյանին՝ հայրենիք-սփյուռք գործակցության զարգացման ոլորտում կատարած հայրենանվեր գործունեության եւ փառատոնին աջակցելու պատրաստակամության համար ու նախարարին նվիրեց աշխարհում ապրող հայերին խորհրդանշող տաղանդավոր արվեստագետ Արա Սարգսյանի հեղինակած մագաղաթե կտավը:

«Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի ավարտից հետո ամփոփիչ ասուլիսին նախարարության

ներկայացուցիչ Հակոբ Ասատրյանը նշեց, որ ՀՀ սփյուռքի նախարարության սահմանած «Տարվա լավագույն սփյուռքահայ ռեժիսոր» «Ոսկե ծիրան» հատուկ մրցանակին ու պատվոգրին է արժանացել իրանահայ ռեժիսոր Վարուժ Քարիմ-Մասիհին, փառատոնի «Հայկական համայնապատկեր» խաղարկային ֆիլմերի շարքում ներկայացրած «Կասկած» ֆիլմի համար:

Հաշվի առնելով, որ մրցանակակիրը չէր կարողացել ժամանել փառատոնին, մրցանակը նրան կհանձնվի, երբ նա կայցելի Երեւան, տեղեկացրեց Հակոբ Ասատրյանը:

Իրան

Ըստ IRNA գործակալության՝ Իրանի նախագահական ընտրություններում հաղթել է գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադը

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:Իրանական պաշտոնական IRNA գործակալությունը հայտնել է հունիսի 12-ին կայացած Իրանի նախագահական ընտրություններում գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հաղթանակի մասին: Ըստ գործակալության՝ դոկտոր Ահմադինեժադը, ստանալով ձայների մեծամասնությունը, հաղթել է նախագահական ընտրություններում:

Նշենք, որ ԻԻՀ նախագահի պաշտոնի համար պայքարում էր 4 թեկնածու՝ գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, «բարեփոխականների» ճամբարից նախկին վարչապետ Միր Հոսեյնի Մուսավին, խորհրդարանի նախկին նախագահ Մեհդի Քյարուբին եւ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի նախկին հրամանատար Մոհսեն Ռեզային:

Նախագահական ընտրություններում հաղթելու համար անհրաժեշտ է քվեների բացարձակ մեծամասնությունը՝ 50 տոկոս գումարած մեկ ձայն: Նախագահի լիազորությունների ժամկետը Իրանում 4 տարի է:

Ձայների վերահաշվարկը հաստատել է Մահմուդ Ահմադինեժադի հաղթանակը Իրանի նախագահական ընտրություններում

ՌԱԲԱԹ, 30 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի գերագույն օրենսդիր մարմինը՝ Սահմանադրության պահապանների խորհուրդը ավարտել է առանց հատուկ ընտրության վերցված 10 տոկոս քվեաթերթիկների վերահաշվարկը, որոնք տրվել էին Իսլամական Հանրապետությունում կայացած նախագահական ընտրությունների ընթացքում: Իրանի պետական հեռուստառադիոհաղորդումների կորպորացիայի տեղեկատվության համաձայն՝ ձայների վերահաշվարկը հաստատել է գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հաղթանակն իր մրցակցի՝ ընդդիմության թեկնածու Միրհոսեյն Մուսավիի նկատմամբ:

«ԱՅՆ, ԻՆՉ ԵՂԱՎ ԻՐԱՆՈՒՄ, ԴԱՍԱԿԱՆ «ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ՓՈՐՁ ԷՐ»

Իրանական վերջին նախագահական ընտրություններից հետո ստեղծված իրավիճակը սպառնալիք է ամբողջ տարածաշրջանի՝ նաեւ Հայաստանի համար: Երեկ «Արմատ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ նման կարծիք հայտնեց քաղաքագետ Լեւոն Մելիք-Շահնազարյանը՝ ավելացնելով, որ Իրանը վերջին տարիներին տարածաշրջանի ամենակայուն երկիրն էր, որ նպաստում էր տարածաշրջանի կայունությանը:

Ընտրություններից առաջ եւ հետո քաղաքագետը գտնվել է Իրանում եւ հնարավորություն է ունեցել համեմատելու երկրում տիրող իրադրությունը: Լ. Մելիք-Շահնազարյանի խոսքերով, մինչ§ ընտրություններն արդեն հնչել էր առաջին ահազանգը, որ Իրանին ներսից վտանգ է սպառնում. «Խոսքս վերաբերում է Մուսավիի այն հայտարարությանը, թե իր ընտրվելու դեպքում Իրանի բոլոր էթնիկական խմբերը հնարավորություն կունենան իրենց լեզվով դպրոցներ հիմնելու, լրատվամիջոցներ ունենալու: Իսկ մինչ այդ Իրանում էթնիկական փոքրամասնություն հասկացություն չի եղել, համենայն դեպս, ոչ ոք դրա մասին չի խոսել: Միայն կան 4 կրոնական փոքրամասնություններ», ասաց քաղաքագետը:

Իրանում տեղի ունեցած քաղաքական վերջին իրադարձությունները նա համարեց գունավոր հեղափոխության դասական փորձ, որը չի հաջողվել: Իրանում տեղի ունեցած բախմանն այս անգամ, նրա խոսքերով, պատրաստ էին միայն քաղաքական առաջնորդները, բայց ոչ ժողովուրդը: Իսկ նոր՝ հնարավոր բախման ժամանակը քաղաքագետը չկարողացավ նշել, միայն նկատեց, որ եթե նորից ընտրություններ լինեն Իրանում, ապա բախումը անխուսափելի կլինի: Իրանին ապագայում սպասում են շատ ավելի լուրջ մարտահրավերներ, քան կան այսօր:

Սփյուռք

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՎՆԵՐՆ ՈՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Երկու տարի սպասուած երեսփոխանական ընտրութիւնները վերջապէս տեղի ունեցան անցեալ շաբաթավերջին՝ կիրակի, յունիս 7-ին: Լիբանանի բոլոր նահանգներուն մէջ ապրող լիբանանցիները այդ օրը տուին իրենց ձայնը: Հանրապետութեան նախագահ զօրավար Միշէլ Սուլէյման ամիսներ առաջ յայտարարած էր, որ ընտրութիւնները պիտի ըլլան ազատ ու թափանցիկ:

Երկու հզօր հոսանքներու պայքարն էր, որ կը մղուէր այս ընտրութիւններու միջոցով. մէկ կողմէն՝ Սաադ Հարիրիի գլխաւորած «Մարտ 14» համախմբումը, որ առաւելաբար արեւմտամէտ քաղաքականութեան մը առաջադրանքներով հրապարակ կու գայ, եւ միւս կողմէն՝ «Հըզբոլլահ» կուսակցութեան գլխաւորած «Մարտ 8» համախմբումը, որ ունի առաւելաբար Իրանի ու Սուրիոյ նեցուկը:

Այս երկու համախմբումներուն մաս կը կազմէին մեր քաղաքական երեք կազմակերպութիւնները: Այսպէս. հայկական կուսակցութիւններէն ՌԱԿ-ն ու ՍԴՀԿ-ն՝ «Մարտ 14»-ի քաղաքական արեւելումին առաւելաբար կողմնակից ըլլալով, գործակցեցան «Մուսքաքպալ» հոսանքի, «Լիբանանեան ուժերու» եւ «Փաղանգաւոր» կուսակցութեան հետ, մինչդեռ ՀՅԴ-ն՝ «Մարտ 8»-ի ուժերուն կողմնակից, գործակցեցաւ «Հըզբոլլահ» կուսակցութեան, «Ամալ» շարժումի եւ զօրավար Միշէլ Աունի կուսակցութեան հետ:

Մեծագումար նիւթական յատկացումներ եղան այս զոյգ համախմբումներուն. մէկ կողմէն Իրանը իրեն հաւատարիմ «Հըզբոլլահ»-ի միջոցով եւ միւս կողմէն՝ Սէուտական Արաբիան՝ Հարիրիի միջոցով: Ասոնք բնական երեւոյթներ են ընտրական պայքարներու ընթացքին, այն տարբերութեամբ, որ ընտրարշաւի տեւողութեան երկրի քաղաքացին է, որ իր նիւթական մասնակցութիւնը կը բերէ տուեալ կուսակցութեան մը կամ համախմբումի մը, մինչդեռ Լիբանանի պարագային օտար երկիրներն են, որ առատաձեռն կերպով դրամ կը նետեն լիբանանեան քաղաքական կրկէսէն ներս:

Լիբանանահայոց ձայնը որոշիչ դեր մը պիտի ունենար այս ընտրութիւններուն: Ասիկա յայտնի էր ընտրապայքարի առաջին օրէն: Արդէն «Նիւ Եորք Թայմզ»-ի սիւնակագիրը՝ Ռոբըրթ Ուըրթի, ընտրութիւններու նախօրեակին, նոյն օրաթերթին մայիս 26-ի թիւով կը գրէր, որ լիբանանահայ համայնքը պիտի ունենայ որոշիչ ձայն մը ընտրութիւններուն մէջ: Ու այդ մենաշնորհումը կու տար Հայ Յեղափոխական Դաշնակցութեան:

Ամիսներ առաջ Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական կոմիտէն աշխատանքի լծուեցաւ արդարացնելու իր վրայ դրուած յոյսերը Բեյրութի ընտրաշրջաններէն ներս: Ան աշխատեցաւ քանի մը ճակատներու վրայ: Այսպէս՝ ապահովելու համար Լիբանանէն արտագաղթած հայերու ձայները, Ամերիկա ուղարկեց իր երեսփոխանը կազմակերպելու համար նախկին լիբանանահայերու մասնակցութիւնը ընտրութիւններուն: Հայեր, որոնք Լիբանանը ձգելնէն ի վեր տասնամեակներ ամբողջ չէին այցելած իրենց ծննդավայրը, օգտուելով ձրի օդանաւային երթուդարձի տոմսակներու եւ կեցութեան ծախսերէն, արձանագրուեցան ՀՅԴ-ի ակումբներէն թէ եկեղեցիներէն ներս: Այս առթիւ Լոս Անջելըսի Ֆերահեան վարժարանի տնօրէն Ժան Քոսակեան յայտարարեց. «Արտերկրի լիբանանահայութեան մասնակցութիւնը համահայկական առումով ցոյց կու տայ համաշխարհային նոր համակարգի մի իրողութիւնը, որ նոյնինքն արդէն մեծ յաղթանակ է»: Առանց նշելու սակայն, որ ատիկա երբեք չի համապատասխաներ քաղաքացիական այն իրաւունքին, երբ քաղաքացին լքած է իր հայրենիքը ու երբեք չէ այցելած հոն:

Այս իրողութիւնը նաեւ կը սեւեռէ ուշադրութիւնը Մ. Նահանգներու զանազան ապահովական եւ ներքին սպասարկութիւններուն հայութեան վրայ, երբ այս անգամ իր երկրի՝ Միացեալ Նահանգներու քաղաքացին կ'երթայ Լիբանան տալու իր ձայնը իրանամէտ «Հըզբոլլահ»-ի գլխաւորած համախմբումին: Փաստօրեն Դաշնակցութիւնը արկածախնդրական քայլ մըն էր, զոր առած կ'ըլլար ի վնաս ամերիկահայ մեր համայնքի անդորր կեանքին:

Երկրորդ, ՀՅԴ-ն Լիբանանի մէջ իր տրամադրութեան տակ եղող բոլոր գործօնները կը դնէր իր սպասարկութեան տակ: Այսպէս, Անթիլիասի Կիլիկեան աթոռը, որ հեռու մնալու էր այս ընտրական պայքարէն, սկսաւ մաս կազմել ընտրարշաւին, անգամ մը եւս կորսնցնելով իր անկախութիւնը ներկայանալու իր թեմերէն ներս որպէս հոգեւոր, եւ ոչ թէ քաղաքական կեդրոն:

Միւս կողմէն, ՀՅԴ-ն յառաջ բերաւ «Հայկական երեսփոխանական բլոք» մը, որ փաստօրէն իր գլխաւորած ճակատը պիտի ըլլար: Հրաւէր ուղղեց նախ միւս երկու կուսակցութիւններուն՝ ՍՀԴԿ եւ ՌԱԿ, որպէսզի մաս կազմէին այդ բլոքին: Բարեբախտաբար մեր զոյգ կուսակցութիւնները կանուխէն անդրադարձան Դաշնակցութեան քաղաքական խաղին եւ մերժեցին առաջին իսկ պահէն մաս կազմելու այդ ճակատին: Դաշնակցութիւնը անպայմանօրէն կ'ուզէր Լիբանանի ժողովուրդին ներկայանալ համայն հայութեան անունով: Ասիկա կարեւոր էր նաեւ ապահովելու իր դիրքերը Հայաստանի պետական շրջանակներու մօտ, որպէս սփիւռքահայութեան լիազօր ներկայացուցիչ:

Դժբախտաբար այդ խաղին զոհը դարձաւ Արթիւր Նազարեան, ՀԲԸ Միութեան բարեհամբաւ Նազարեան տոհմին զաւակը: Դաշնակցութիւնը խորհեցաւ, թէ պրն Արթիւր Նազարեանը բերելով սիրաշահած պիտի ըլլար ՀԲԸՄ-ի մեծ ընտանիքը: Բարեբախտաբար միութեան ղեկավարութիւնը ինքզինք անջատեց անկէ:

Նոյն խաղը ՀՅԴ-ն այս անգամ խաղալ ուզեց ՌԱԿ-ի Կեդրոնական վարչութեան հերթապահին՝ Մայք Խարապեանին միջնորդութեանը ապաւինելով: Ան միամտաբար կամ այլապէս տարբեր շահերէ առաջնորդուելով ու բոլորիս կողմէ անհասկանալի պատճառներով գործակցութեան ձեռք երկարեց ՀՅԴ-ին, որպէսզի Լիբանանի մեր շրջանակը մաս կազմէր Դաշնակցութեան ղեկավարած այդ բլոքին: Բարեբախտաբար, ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչութիւնը, գլխաւորութեամբ իր ատենապետին՝ տոքթ. Աւետիս Տաքէսեանին, արթնօրէն ընթացք չտուաւ Խարապեանի հրահանգին ու շարունակեց մաս կազմել «Մարտ 14» համախմբումին: Այս անտեղի միջամտութեանց պատճառով երկու շրջան ՌԱԿ-ի երեսփոխանական աթոռը գրաւած Յակոբ Գասարճեան ստիպուած եղաւ իր տեղը զիջիլ ՌԱԿ-ի նոր ներկայացուցչին՝ Ժան Օղասափեանին: Սակայն,

միաժամանակ, ընկեր Յ. Գասարճեան շարունակեց ղեկավարել երեսփոխանական ընտրապայքարը բովանդակ տեւողութեան, պահելով կուսակցական կարգապահութիւն:

Հետեւելով հանրահաւաքներու ընթացքին հնչած խօսքերուն, տխրութեամբ կ՚արձանագրենք, որ Դաշնակցութեան պատասխանատուները եւ ի մասնաւորի Յակոբ Բագրատունին անցեալ դարու 30-ական թուականներու եւ Ցուրտ պատերազմի օրերու ոգիով լեցուն բառամթերքով մը կ՚ունենար իր ելոյթները հնչակեաններու եւ ռամկավարներուն հասցեին: Ամբոխավարութիւն մը, զոր պիտի որակենք փողոցային, երբ մէկ կողմէ Դաշնակցութիւնը իր ուզած պահուն կը յայտարարէ «մէկ ազգ, մէկ հայրենիք», իսկ միւս կողմէ, յատկապես երբ ինք կը զրկուի առաջնորդութեան դերը ստանձնելէ, արդէն կը վերադառնայ իր անցեալի տխուր գործելակերպին:

Եւ ահա արդիւնքները արեւու լոյսի նման պայծառ կը հրապարակուին ընտրութեան յաջորդ օրերուն:

Բեյրութի Բ. ընտրաշրջանէն Դոհայի համաձայնությամբ առանց ընտրապայքարի ընտրուեցան Սեպուհ Գալփաքեան (ՍԴՀԿ) եւ Արթիւր Նազարեան:

Բեյրութի Ա. ընտրաշրջանէն ընտրուեցան «Մարտ 14» համախմբումի ներկայացուցիչներ Ժան Օղասափեան (ՌԱԿ) եւ Հայ կաթողիկե համայնքէն Սերժ Թուրսարգիսեան:

Մեթնէն (Լեռնալիբանան) առանց ընտրապայքարի ընտրուեցաւ Յակոբ Բագրատունին (ՀՅԴ):

Զահլէէն՝ «Մարտ 14» համախմբումի ներկայացուցիչ Շանթ Չինչինեանը:

Այսպիսով հայ երեսփոխաններէն 4-ը «Մարտ 14» համախմբումէն եւ 2-ը «Հըզբոլլահի» գլխաւորած ընդդիմութենէն են:

Ու այս անգամ մենք է, որ կ՚արձանագրենք անցեալ շաբթուան ՀՅԴ «Ազդակ» օրաթերթի վերնագիրներն ու լոզունգները.

«7 յունիսին լիբանանահայութիւնը իր քուէներով տիրացաւ իր իրաւունքներուն», կամ՝ «Մեր բոլոր քաղաքացիները առաւելագոյն թիւով մասնակցեցան, քանի որ մեր պայքարը իրենց համար է, զօրաւոր Լիբանանի մէջ ուժեղ ներկայութիւն ունենալու համար է», ու դեռ՝ «Մենք այսօր պիտի քուէարկենք ապագայ սերունդին համար, որպէսզի անիկա ազատ ու ինքնիշխան Լիբանանի մէջ ապրի»:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ, Նիւ Եորք

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Այդ մասին երեկվա համարում նշել է թուրքական «Հյուրիեթ» թերթը: Ինչպես հայտնի է, Կ. Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը վատառողջության պատճառով ի զորու չէ կատարել զբաղեցրած պաշտոնից բխող պարտականությունները: Ելնելով այս հանգամանքից, պատրիարքարանի հոգեւոր խորհուրդը, «Հյուրիեթի» վկայությամբ, դիմել է վարչապետ Էրդողանի կառավարությանը եւ պահանջել վերանայել պատրիարքի ընտրության կարգը:

Ըստ «Հյուրիեթի», դիմումում հոգեւոր խորհուրդը կառավարության ուշադրությունն է հրավիրել Մութաֆյան պատրիարքի առողջական վիճակի վրա, խնդրել է, որ Պոլսո հայոց 85-րդ պատրիարքն առաջիկայում ընտրվի «աթոռակցի» կարգավիճակով, որպեսզի իրավահավասարության հիմունքներով պահպանվեն Մեսրոպ Բ-ի լիազորությունները: Կառավարությունը հավանություն է տվել պատրիարքարանի հոգեւոր խորհրդի դիմումին եւ որոշել է վերանայել «Պատրիարքի ընտրության կանոնակարգը», որը դեռեւս նախարարների խորհրդի որոշումով Թուրքիայում ուժի մեջ էր մտել 1961-ից: Նոր պատրիարքի ընտրության մասին հաջորդ դիմումը կառավարությանը կներկայացվի առաջիկա ամիսներին:

Հասարակական

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ - ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ՍԵՄԻՆԱՐ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Մաս 2

Սեպուհ արք. Սարգսյանի խոսքը

Հայաստան-Սփյուռք հարաբերության շրջագծում ՀՀ նախագահը ողջունելի նախաձեռնության է դիմել՝ հիմնելով Սփյուռքի նախարարություն: Սա, անշուշտ, ցույց է տալիս ՀՀ-ի նախանձախնդիր վերաբերմունքը և ողջունելի մտածումը սփյուռքի նկատմամբ: Վերջին 50 տարիներին Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում սա առաջին նախաձեռնությունը չի եղել: Սովետական Սոցիալիստական ՀՀ-ն էլ ժամանակին սփյուռքի հետ հարաբերվելու համար սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտե հիմնած էր, որը իր աշխատանքները տարած է այն օրվա մտածելակերպի, գաղափարական աշխարհի շրջագծի մեջ: Թե ինչպիսի գործունեություն ունեցած է, այդ տարբեր հարց է, բայց թե հայրենի հողի վրա եղած պետությունը միշտ ալ իր մտքում ունեցել է իր լավագույն կեսը, այսպես ասած, հիմա պիտի ասենք՝ իր լավագույն երեք չորրորդը: Եթե գաղափրական մեկնակետեն սկսելով այդ մոտեցումը եղած է որոշ չափով, այդ հարցը ուրիշ է, բայց երևույթը եթե նկատի ունենանք, մենք միշտ զգացած ենք պետության նախանձախնդրությունը սփյուռքի նկատմամբ: Ունեցած 17 տարիների ընթացքում այդ կապը մի քիչ մեղմացավ, թուլացավ: Նորընտիր նախագահ պրն. Խերժ սարգսյանը եկավ և այս անգամ ուղղակիորեն ավելի լուրջ հանգամանք տալու մտադրությամբ: Այդ օրից, որ սփյուռքի նախարարությունը կազմված է, մինչև այսօր որոնումի մեջ է ինքը, որպեսզի կերտե լավագույն ճանապարհները սփյուռքի հետ հաղորդակցվելու և ահավասիկ այս երկրորդ հայեցակարգն է, որ շրջանառության մեջ է: Վստահ եմ, որ այս համագումարները որ տարբեր գաղութների մեջ տեղի են ունենում, առաջարկները, որ տրվելու են, անպայման նկատի առնվելու են և գործառության լույսի տակ

հայեցակարգը կմշակվի, որովհետև սառեցյալ օրենքներով կարելի չէ հարաբերություններ մշակել: Ի վերջո բոլորս էլ մարդ ենք, իրափոփոխ պայմանների մեջ ենք, որոնք մեզ ստիպում են ըստ այդմ առաջնորդվել և ոչ թե նախորոք գրվածով, որպես թե այդ օրենքները երկնքից են իջած: Աստվածաշունչն ալ մեզ սովերեցնում է, որ երբեմն պատրադրանքը, հարկը՝ օրենքը կլուծե: Եվ կը կարծեմ, որ մենք բոլորս էլ այդ գիտակցությունն ունենք, ես չեմ ուզել ավելի խոր վերլուծության երթար, բայց չեմ կրնար չարտահայտել այն միտքը, որ սփյուռքյան ողջ տարածքի վրա սպասում են, որ նախարարության կազմվելեն առաջ կամ նման հայեցակարգը գոնե սփյուռքյան հիմնական կառույցներու մեջ, գաղութներու մեջ գործող հիմնական եկեղեցական, ազգային, քաղաքական, տնտեսական ընկերային կառույցների հետ համախորհրդակցաբար լիներ: Սա միայն իմ վերապահությունը չէ, ես մամուլից հետևել եմ ընդհանրապես մեր թեմերի մեջ առաջին մտահոգությունը այս եղած է: Բայց այդ չի նշանակեր, որ այսօրվա մեզ ընձեռնված առիթները լավագույն կերպով պիտի չօգտագործենք, որպեսզի մեր դերակատարությունը բերենք նման աշխատանքներին: Հայեցակարգի առաջին և երկրորդ տարբերակները այնքան մտահոգիչ կետեր ունեին՝ թե Հայաստան-սփյուռք հարաբերության և թե Սփյուռք-Հայաստան հարաբերության շրջագծի մեջ: Ամենից պարզ օրինակը՝ սփյուռքը տարաբնույթ է և բազմաթիվ բնագավառներ է ընդգրկում և մենք, որպես գաղութ, ինչ հարաբերություն պիտի ունենանք հարևան երկրի հետ: Բայց մենք՝ կրթական և մշակութային հարաբերություններ պիտի ունենանք և այդ սփյուռքի նախարարության հետ պիտի ունենա՞նք, թե՞ կրթության, մշակույթի նախարարությանհետ: Սրանք բոլորը հարցեր են, որ պետք է ուսումնասիրել, արծարծենլ, որ սփյուռքի նախարարությունը կողմնորոշվի: Ամբողջության մեջ ողջունելի նախաձեռնություն է, բայց միևնույն ժամանակ որոշ մտահոգություններ արթնանցնող նախաձեռնություն է: Այն խմորով, որ մեր հարաբերությունները ի՞նչ ձևի վրա պիտի ըլլա:

Սիրելի բարեկամներ մենք Եվրոպայի կամ Ամերիկայի մեջ չենք, մենք երրորդ աշխարհի մեջ ենք, ընդհանրապես միջին արևելքի երկրների մեջ, հատկապես իրանահայ գաղութը նվազագույնը 1500 տարվա կյանքի փորձ ունեցած է իր ինքնությունը պահպանելու տեսակետից, և այդ որոշ իմաստություն տվել է այս գաղութին և այն չի կարող մեկ անգամից մեկ կողմ ձգել: Այդ իմաստության լույսի տակ պիտի առաջնորդվինք: Կարող է պատահել այս համագումարը լինի բաց համագումար առաջիկայում նման նախաձեռնությունների համար և տեսնենք, թե մեր բանաձևումները կամ առաջարկները, որոնք պիտի երթան սփյուռքի նխարարություն, նոր հաեցակարգ պիտի գրվի: Այսօր սփյուռքի նախարարության գոյության ամենակրիտիկական մոմենտն է, սփյուռքը մեծամասամբ և Հայաստանը և Արցախը, այսպես ասած, ճակատագրական հատվածի մեջ են, որովհետև սփյուռքը ինքն իրեն իրավունք չի տա Հայաստանի ղեկավարությանը քաղաքական կողմնորումներ անելու ուղղություն տալ, բայց մտահոգ է սփյուռքը, մտահոգ է Հայաստանը վերջին զարգացողշումների հեռանկարով: Հայ-թրքական հարաբերությունները կարելի է մեր սեմինարին կապ չունենա, բայց այդ պլատֆորմի վրա պիտի Հայաստան-սփյուռք, Սփյուռք- Հայաստան հարաբերությունները ճշտորոշե, որովհետև, ուզենք թե չուզենք, այդ իրականությունն է դրված, խնդրո առարկան մեր հայրենիքն է, մեր ամբողջական հայրենիքն է, մեր մեկ ու կես միլիոն նահատակների ցեղասպանության ամենանվիրական հարցն է և այդ հարցերի նկատմամբ մեզանից որևէ մեկը ինչ դիրքի ու հանգամանքի մեջ էլ, որ լինի իրավունք չունի ճիշտ կերպով չկողմնորոշվելու, իր ամբողջ ժողովրդի ընդհանուր մտահոգությունները նկատի չառնելու: Ես կը կարծեմ այս ենթահողը որպես մեկնակետ նկատի ունենանք և առաջնորդվենք: Բայց մեր մտահոգությունների արտահայտվելու իրավունքը մերն է և այդ իրավունքը գալիս է մեր ամբողջական հայրենիքի հանդեպ ունեցած գիտակցությունից:

14-րդ Պատգամավորական Ժողովի Քառամյա գործունեության նախագիծ

Մաս 2

Հասարակական

1- Հասարակությանը ծառայելու նպատակով ճիշտ ծրագրեր մշակելու համար նախևառաջ անհրաժեշտ է ՊԺ-ի հասարակության հետ հաղորդակցության միջոցների մշակումը: Այս ուղղությամբ հարկ է իրականացնել հետևյալ կիրառումները՝

ա- Պատգամավորների և ժողովրդի միջև կենդանի կապեր հաստատելու ուղղությամբ, առաջնորդվել հետևյալ մեխանիզմներով՝

- Յուրաքանչյուր քաղաքամասում ՊԺ-ի և հայ բնակչության կապի կենտրոն պետք է համարվի եկեղեցական Խորհրդի գրասենյակը:
- Քաղաքամասի ժողովուրդը իր խնդիրները ՊԺ-ին փոխանցելու համար պետք է գրավոր դիմում հանձնի Եկեղեցական Խորհրդի գրասենյակ: Եկեղեցական Խորհուրդը ստացած դիմումները պետք է փոխանցի ՊԺ-ի դիվանին, որի միջոցով հարցը քաղաքամասի պատգանավորներին կը փոխանցվի առ ի տեղեկություն և քննարկում:

բ- Իրանահայ մամուլի թղթակիցներին թույլատրել մասնակցելու ՊԺ-ի նիստերին ունկնդրի կարգավիճակով: Բացառություն կարող են կազմել այն նիստերը, որտեղ, ըստ օրակարգի, ՊԺ-ն հարմար չի գտնի մամուլի ներկայությունը: Այս կապակցությամբ հարկ է մշակել կանոնակարգ, որին պետք է ենթարկվեն թղթակիցները:

գ- Հրատարակել ՊԺ-ի պաշտոնաթերթ:

դ- Աշխուժացնել ԹՀԹ-ի կայքէջը:

2- Համայնքի բնակչության տեսակետների հետ ծանոթանալով՝ պետք է ուսումնասիրել և առաջարկել նախագծեր արտագաղթի հոսքը նվազեցնելու համար: Նախագծերի մեջ հատուկ ուշադրություն պետք է դարձնել համայնքի տարբեր խավերի, այդ թվում՝ կարիքավոր ընտանիքների, տարեցների, երիտասարդների և նորապսակների հանդեպ:

3- Մարզամշակութային ասպարեզում միությունների հետ համադրաբար կազմել համընդհանուր քաղաքականություն և համապատասխան ծրագրեր:

4- Ստեղծել իրանահայության վիճակագրական և մասնագիտական տվյալների հավաքագրման և տեղեկատվական ցանց, որը օժտված կլինի տեղեկությունների շարունակական այժմեականացնելու հնարավորությունով:

Վարչական- Կազմակերպչական

1- Ստեղծել ՊԺ-ի մնայուն գրասենյակ ազգային առաջնորդարանում:

2- Վերամշակել ԹՀԹ-ի պարսկերեն և հայերեն կանոնագրությունները, համապատասխանեցնելով այն օրվա պահանջների հետ:
3- Պատրաստել ՊԺ-ի ներքին կանոնակարգը և ընտրական օրենսգիրքը:
4- Թեմական Խորհրդի անդամակազմի թեկնածուների ընտրության համար մշակել հստակ չափանիշներ:

Համասփյուռքյան հարաբերություններ
Հայաստան-Սփյուռք համագործակցություն
ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համագործակցություն ծավալելու համար ուսումնասիրություն կատարել և մշակել հստակ ծրագրեր:
Հոգևոր
1- Կրոնական Խորհրդին հանձնարարել զբաղվելու համալսարանի մուտքի քննության կրոնի հարցերի մշակմամբ:
2- Հոգևոր ճեմարան կամ համալսարան հիմնադրելու հարցը քննարկման ենթարկել և ձգտել համայնքում նման մի կենտրոնի ստեղծմանը:

Հարցազրույց ԼՂՀ-ի պաշտպանության նախկին նախարար՝ Սամվել Բաբայանի հետ

«Լույս» ամսագիրը մի հարցազրույց ունեցավ Արցախի նախկին պաշտպանության նախարար Սամվել Բաբայանի հետ Երևանի իր գրասենյակում, որը ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:
- Նախ շնորհակալություն ենք հայտնում Ձեր ընդունելիության և հարցազրույցի համար: Ձեր կենսագրությունը բոլորիս համար քաջ ծանոթ է, սակայն կխնդրենք բացատրություն տաք ռազմական դաշտից քաղաքական դաշտ տեղափոխվելու մասին:
- Ռազմականից քաղաքական դաշտ տեղափոխվելը կապ ուներ 1999 թ-ին, երբ գաղափարական և հայացքների հակասություններ կար Ղարաբաղի իշխանությունների հետ: Դրանք վերաբերվում էին ռազմական, տնտեսական, քաղաքական և մի շարք այլ հարցերում, որոնք ավարտվեցին այնպես, ինչպես պարզ է բոլորիս: Բացի քաղաքական, այլ ձև չկար, ընտրություններին մասնակցելուց հետո միացանք ռամկավար կուսակցությանը, բանակցություններ ունեցանք մի շարք կուսակցությունների հետ, արդենն չորս կուսակցություններ իրար հետ միացել են աջ ազգային ուժեր ստեղծելու նպատակով:
- Որոնք են այդ կուսակցությունները
- Ռամկավար Ազատական, Դաշինք Վերածնունդ և Հայաստանի Ազատական կուսակցությունները: Բայց, քանի որ դեռ չի կայացել, չեմ կարող ավելին ասել: Տարբեր անհատների հետ նաև բանակցությունների մեջ ենք, ինչ որ մի քաղաքական ուժ պետք է ստեղծվի: Հետո պետք է փորձենք նույն հայացքները համակրող ուժերի հետ բանակցել, ինչքանով դա կստացվի՝ ժամանակը դա ցույց կտա:
- Որն է այդ գաղափարը կամ տեսակետները, որոնց շուրջ այդ ուժերը կարող են համախմբվել:
- Առաջին հերթին տարածաշրջանում ինտեգրվել և ոչ դեպի Նատո և ոչ էլ դեպի Ռուսաստան, այլ հենվել սեփական ուժերի վրա և տարածաշրջանում գնալ տնտեսական, քաղաքական և ռազմական ինտեգրացման: Անդրկովկասում 15 ազգություններ են ապրում և կան երեք պետություններ, որոնք անհնար է տարբեր գերտերությունների լծի տակ կամ նրանց շահերը պաշտպանող երկրներ լինեն և կոչվեն անկախ պետություն: Առաջին հերթին պետք է լինի տարածաշրջանի և հետո Եվրոմիության հետ ինտեգրանցում և երրորդ ուժեր չտեղակայվեն կովկասում: Սա է մեր գլխավոր սկզբունքը:
- Տարածաշրջանային ինտեգրանցում ասելով՝ ո՞ր երկրներին նկատի ունեք:
- Ադրբեյջան, Վրաստան և Հայաստան:
- Ինչ պետք է հասկանալ ինտեգրացումից և ի՞նչպես եք պատկերացնում այն:
- Առաջինը՝ դա տնտեսական ինտեգրանցումն է, ժողովուրդները պետք է տնտեսական շահեր ունենան իրար հետ, որից հետո կլինի քաղաքական ինտեգրացում:
- Ինչու այստեղ նկատի չունեք տարածաշրջանային ուրիշ երկրներին նաև, օրինակ Իրանին, Ռուսաստանին և Թուրքիային՝ որպես այս տարածաշրջանի մի մասը:
- Որովհետև չեն կարող, օրինակ, Ռուսաստանը, որը ունի իր սեփական հայացքները, Թուրքիան, որ ՆԱՏՈ-ի անդամ է և նրա շահերն է պաշտպանում, Ռուսաստանը, որ ուզում է ինքը իշխի և Իրանը, որ ուզում է ինչ-որ չափով իր հսկողության տակ ունենա տարածաշրջանը, ոնց որ անենք այս երեք մեծ պետությունների հետ՝ ինտեգրանցում չի ստացվի: Առաջին հերթին՝ այս երեք պետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանը ու Վրաստանը տնտեսապես և փոխշահավետ ինտեգրվեն, որից հետո մեր հարևան պետությունների հետ՝ Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի հետ կսկսենք տարածաշրջանային համագործակցություն տարբեր ոլորտներում:
- Ձեր այս ինտեգրանցման գաղափարը ի՞նչպես է ընդունվում Վրաստանի և Ադրբեջանի կողմից:
- Վրաստանը, որ ՆԱՏՈ-ի քաղաքականությունն է առաջ տանում իր տարածքների կապակցությամբ լարվածության մեջ է և այդ լարվածությունը դեռ երկար ժամանակ շարունակվելու է և ինչով է ավարտվելու ոչ ոք չի կարող նախագուշակել: Վրաստանում առաջացավ ԱՄՆ-ին մոտ կանգնած իշխանություն, եթե կրկին լինի իշխանության փոփոխություն և մի իշխանություն գա, որ գնա դեպի Ռուսաստան, էլի պրոբլեմ կունենա, ուրեմն անընդհատ մենք այդ պրոբլեմների մեջ ենք գտնվելու: Թե Վրաստանում և թե Ադրբեջանում պետք է գտնենք նմանատիպ մտածող մարդիկ, որոնք կարող են վարել միայն այդ քաղաքականությունը: Իմ կարծիքով սա միակ ճանապարհն է Կովկասի փրկության համար, այլընտրանք չունենք, եթե ոչ միշտ պրոբլեմների մեջ կլինենք:
- Ադրբեջանում կամ Վրաստանում կա որևէ կուսակցություն կամ կազմակերպություն, որը կիսում է այդ գաղափարախոսությունը:
- Այո, կապեր ստեղծել ենք Վրաստանի հետ, բայց ոչ Ադրբեջանի, սակայն Վրաստանն էլ նման կապեր ստեղծել է Ադրբեջանի հետ: Ի վերջո պարտադրված ենք գնալու այս ճանապարհով, այնպես որ կան այդ ուժերը, որոնց հետ պետք է համագործակցենք:
- Հիմա ենթադրենք, թե ապագայում նման գաղափարի իրականացումը սկսվում է, այդ դեպքում ի՞նչպիսին կլինի Արցախի հարցի լուծումը:
- Եթե ինտեգրացման հարցը լուծվի, դա էլ կլուծվի, որովհետև այդ դեպքում սահման հասկացողությունը վերանում է և այդ տարածքը կոչվում է «Մանդատային տարածք», աշխարհում այդ փորձը կա, դրանք Ղարաբաղի համար լինում են այնպիսի տարածքներ, որ 10, 20 կամ 30 տարի ինտերգրվելուց և տնտեսական զարգացումից հետո ռեֆերենդում են անում և անկախ որոշում են՝ Հայաստանի հետ են, թե՞ Ադրբեջանի, մարդկանց տրվում է իրենք որոշեն իրենց ճակատագիրը: Հիմա մինչև մանդատային տարածք լինելը Կովկասը տարածքով համարվում է Եվրոմիության մի մասը և երեք հանրապետություններն էլ հայտարարում են, որ իրենք ցանկանում են ինտեգրվել Եվրոմիությանը, դա ապացուցվեց Օսեթիա-Աբխազիա պրոբլեմում, երբ որ Ռուսաստանն ու Ամերիկան դարձան կողմեր, Եվրոմիությունը ապացուցեց, որ միջնորդի դեր կարող է

ստանձնել: Նույնը առաջարկում ենք մենք, որ պատասխանատվություն վերցնի Եվրոմիությունը և հայտարարի այն՝ մանդատային տարածք և ինչ-որ չափով զիջումների գնանաք, և այդ տարածքը տնտեսապես, սոցիալապես ու քաղաքականապես ու բոլոր հարցերով զարգացման տանել և նոր միայն, երբ որ Կովկասը պատրաստ կլինի ինտեգրվելու ընդհանուր Եվրոմիության ընտանիքին, այդ ժամանակ Արցախի խնդիրը կդրվի և տվյալ տարածքում ապրող ժողովուրդներին կթույլատրվի ինքնուրույն ընտրել իրենց ճակատագիրը: Սա այն տարբերակն է, որ Ադրբեջանը կարող է իր ժողովրդին բացատրի, որ դեռ Ղարաբաղի հարցը վերջնականապես լուծված չի և համոզի նրանց, որ պետք է համագործակցենք և միմյանց թշնամիներ չեն լինելու այլևս և այլն: Հայ ժողովուրդը այդ տարածքում, հայկական լեզվով ասած կունենա իր իշխանությունը: Կողմերը միմյանց սպանել են և մի օրում չի լինի հաշտություն կնքել:

- Ի՞նչ հիմունքներով կամ քաղաքական դիտանկյուներից՝ ինտեգրվելու գաղափարը չի ընդունվում Հայաստանի քաղաքական մյուս ուժերի կողմից:

- Առաջին հերթին մյուս քաղաքական ուժերը մինչև վերջերս պնդում էին, որ Եվրոպան պատրաստ չի նման պատասխանատվություն իր վրա վերցնել, բայց տեսանք, որ պատրաստակամությունը կար և Օսեթիայի և Աբխազիայի հարցում միջնորդի դեր կատարեց ու պատասխանատվություն վերցրեց: Հիմա հարց է ծագում՝ ինչո՞ւ այնտեղ պատրաստ էր պատասխանատվություն հանձն առնի, սակայն Ղարաբաղի հարցում պատրստ չի, ինչ է, սպասում ենք, որ մի պատերազմ էլ բռնկվի և այն ժամանակ պատրաստ լինի, չի կարելի մինչև այդ սպասել և գնալ խնդրի կամ լարվածության թուլացման ճանապարհով:

- Թեման փոխելով՝ կուզենայինք անդրադառնալ Ձեր կուսակցության որոշ հարցերին, Դուք դաշինք ստեղծեցիք Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցության (ՀՌԱԿ) հետ, որն էր դրդապատճառը և ինչ նպատակներ էիք հետապնդում և ինչպես եք գնահատում ՀՌԱԿ-ի ներկա վիճակը Հայաստանում: Ինչքանով, որ տեղյակ ենք պառակտում գոյություն ունի այդ կուսակցության մեջ, որն է Ձեր գնահատականը:

- Երբ որ կուսակցությունը երկար տարիներ իր հաջողությունը չի կարողանում գտնի և իր դիրքը գրավի քաղաքական դաշտում, ուրեմն ընդհանուր պրոբլեմներ կան, բայց ինչ վերաբերում է կուսակցության մեջ այլ քողարկված պրոբլեմներին, ես հանդիպել եմ բոլոր ռամկավարներին և բանակցել եմ և այդպիսիք: Կուսակցությունը, որ չի ունենում հաջողություն, սկսվում է պառակտում և երկու թևերը մեկը մյուսին է մեղադրում: Կուսակցության անդամները չպետք է թույլ տային նման պառակտման զարգացումը: Համագումար պետք է արվի և ընտրվի ղեկավար կազմ և գործերը ընթանան առաջ:

- Այսպիսով մտածում ենք, որ անձնական պատճառներով է դա տեղի ունեցել, դուք ի՞նչ աշխատանք եք տանում, որ նրանք համատեղվեն ու միանան, քանի որ գաղափարախոսության տարբերություն չկա, գնում ե՞ք այդ ընթացքով, որ համագումար լինի և Դուք էլ Ձեր հերթին դերակատար լինեք այդ հարցում:

- Այսօր, կոնկրետ այսօր, այդ աշխատանքները չի տարվում, որովհետև մենք այսօր զբաղված ենք գաղափարակից կուսակցությունների ու անհատների միավորման հարցով, Հայաստանի ներսում այդ կուսկցության անդամների հետ բանակցություններ վարելու ենք պառակտումը վերացնելու ուղղությամբ:

- Ձեր կուսակցության միացումը Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցության մի թևի հետ է, թե՞ բոլոր կողմերի կամ անհատների հետ:

- Բոլոր կողմերի մասին, որ խոսում եք, դրանք վաղուց հեռացել են ՀՌԱԿ-ից, եթե մեկը չի մնացել, որ պայքարի և ճշտի ու հեռացել է կուսակցությունից, ես հո չեմ կարող նրա հետ բանակցել ու խնդրեմ, որ նորից հետ գաս կուսակցության մեջ: Հայաստանում ես չգիտեմ մի ուժ, որ Ռամկավար Ազատական կուսակցական է և ինքը այդ թիմի մեջ չի:

- Իրանահայ համայնքի մասին ի՞նչ պատկերացում ունեք:

- Եթե անկեղծ լինեմ պետք է ասեմ, որ ես ընդհանրապես տեղեկություն չունեմ և հատուկ պատկերացում չի ձևավորվել:

- Վերջերս Հայաստանում ստեղծվել է Սփյուռքի նախարարություն, Ձեր կուսակցությունը ի՞նչ մոտեցում ունի այդ նախարարության կամ սփյուռքի հետ հարաբերությունների ուղղությամբ:

- Այդ նախարարության ստեղծելը ես համարում եմ ճիշտ և պետք է ուղղակի խնդիրները ճիշտ ձևավորեն և հասնեն իրենց նպատակներին, սփյուռքը, իրոք, պետք է տեղյակ լինի Հայաստանի իրական իրավիճակից:

Հարցազրույցը վարեց դկտ. Ռուբիկ Սարդարյանը

Պատգամավորական Ժողովի 4 օրյա լարված աշխատանքը
ԹԽ-ի նոր ընտրություններ

ԹՀԹ-ի Պատգամավորական Ժողովը 2009 թվականի մայիսի 23-ից իր շարունակական չորս նիստերի ընթացքում իրականացրեց հետևյալ օրակարգերը՝ Նախորդ արձանագրությունների ընթերցում և վավերացում, ԹԽ-ի նոր ընտրություններ անցկացնելու նպատակով ընտրական, քվեախույզ և բանաձևային հանձնախմբերի ընտրություն, Կրոնական Խորհրդի տեղեկագրի ներկայացում և քննարկում, Թեմական Խորհրդի զեկույցի ներկայացում և քննարկում, հաշվեքննիչ մարմնի զեկույցի ներկայացում և քննարկում, առաջարկների ներկայացում Թեմական Խորհրդի ապագա գործունեության համար, բանաձևերի ընթերցում և վավերացում, Կրոնական Խորհրդի ընտրություն, Թեմական Խորհրդի ընտրություն, հաշվեքննիչ մարմնի ընտրություն:

7-րդ նիստի ժամանակ նախորդ նիստերի արձանագրությունների ընթերցումից հետո կրոնական Խորհուրդը ներկայացրեց իր երկամյա զեկույցը, որը ենթարկվեց քննարկման, եղել են տարբեր հարցերի շուրջ հարց ու պատասխաններ ու առաջարկներ: Այն հանգամանքը, որ մեր համայնքի հոգևորականները մեր Ազգային Իշխանության ոչ պաշտոնյա աշխատողներ են համարվում շատ է անհանգստացնում և բացասաբար է ազդել մեր հոգևորականների տրամադրության վրա: Մեր հոգևորականների հստակ կարգավիճակ չունենալը կամ դրա շուրջ լռության քաղաքականությունը վստահ բացասական հետևանքներ են ունենալու և բացասաբար են ազդելու նրանց աշխատանքի վրա:

Կիրակի օրվա՝ 8-րդ նիստի ժամանակ Թեմական Խորհուրդը գլուխ առ գլուխ ներկայացրեց իր երկամյա զեկույցը և յուրաքանչյուր գլխի ընթերցումից հետո պատգամավորներին իրավունք էր տրվում իրենց հարցումներն ուղղել ԹԽ-ին, որի հիմնականում պատասխանում էր ԹԽ-ի ատենապետ դկտ. Սիդա Հովհաննիսյանը: Մենք հետագայում կանդրադառնանք ԹԽ-ի տված զեկույցի տարբեր բաժիններին:

Հաջորդ օրվա՝ 9-րդ նիստի ընթացքում տեղի ունեցավ ԹԽ-ի զեկույցի քննարկում և առաջարկների ներկայացում, այնուհետև հաշվեքննիչ մարմինը իր զեկույցը ներկայացրեց: Քննարկումներից կարելի է մատնանշել հետևյալ քննադատությունները ուղղված ԹԽ-ին՝ 1- Մշակութային Մարմնի կյանքի կոչման շուրջ, որը նշված է նաև մեր կանոնագրության մեջ, ԹԽ-ն որևէ քայլ չի վերցրել և անտեսել է քննարկումների եզրակացությունը այդ կապակցությամբ, որում քննարկողների մեծ մասը շեշտել են

այդ մարմնի անհրաժեշտության մասին: Այս գործին ընթացք չի տրվել, հատկապես ԹԽ-ի ատենապետի կողմից, ըստ նրա, նման անհրաժեշտություն գոյություն չունի: 2- ՀՀ-ում կապիտալ ներդրումները հողամասի գնման և «Արգնի» ընկերության գրանցման ուղղությամբ թափանցիկ չէ և, անցյալի փորձից ելնելով, կասկածներ կան, որ սա միայն պետք է ծառայի որոշ կուսակցականների մտահղացումներին, նույնը վերաբերում էր Արցախում «Սասուն» փակ բաժնետիրական ընկերությանը, որտեղ ԹԽ-ն համարվում է իբրև բաժնետեր, սակայն մինչ այժմ որևէ հաշվետվություն այս բաժնետերին չի ներկայացվել և ԹԽ-ն ու հաշվեքննիչ մարմինը այդ ուղղությամբ որևէ խոսք կամ հաշիվ չունեն ներկայացնելու: 3- Որոշ դպրոցների կրթական մակարդակը իջել է, այդ իսկ պատճառով մի խումբ ծնողներ իրենց երեխաներին պարսկական բարձր մակարդակի դպրոց են ուղարկում:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ արտահայտվողները Թեմական Խորհրդի բոլոր անդամներից բոլոր շնորհակալություն էին հայտնում ու բարձր գնահատում նրանց ընդհանուր աշխատանքը:

Վերջին՝ երեքշաբթի օրվա 10-րդ նիստին ներկա էին Իրանի ներքին Գործոց ներկայացուցիչ տիկ. Անդուհգինը, որը եկել էր դիտելու Թեմական Խորհրդի ընտրությունների ընթացքը: Նախորոք ընտրված ընտրական հանձնախումբը ներկայացրեց թեկնածուներին: ԹԽ-ի համար պետք է ընտրվեին 11 հոգի և հետաքրքիր էր, որ սկզբից հենց միայն 11 թեկնածուների ցանկ ներկայացվեց, այս ցանկը պատրաստել է ՀՅԴ-ն իր համապատասխան բարձրագույն մարմիններում և ներկայցրել էր ՊԺ-ի դիվանին ի կատար, այս ընթացքը տարիներ է, որ կիրառվում է և արդեն դրա մասին բոլորը բացեբաց խոսում են: Որպես ոչ դաշնակցական անձնավորություն նրանք ընդգրկել էին դկտ. Հրաչ Խաչատրյանին, սակայն ոչ դաշնակցականների ներկայացրած թեկնածուների անունները մերժվել էին և այդ 11 հոգանոց ցանկի մեջ չէին ընդգրկվել և այդ իսկ պատճառով նրանք իրենց թեկնածությունը հանեցին: Որպեսզի Ներքին Գործոց Նախարարության ներկայացուցչի մոտ ընտրությունները լավ երևան ձևականորեն 4 հոգու անուններ ավելացան ցանկին, սակայն պարզ երևում էր դրա ձևականությունը: Բոլորին պարզ էր, որ պետք է ընտրվեին առաջին 11 հոգին, այդպես էլ եղավ, սակայն ընտրողների 20 տոկոսը, որ դեմ էր կուսակցության նման կոշտ մոտեցմանը, որպես բողոք սպիտակ քվեաթերթիկ հանձնեց: Այս երևույթը պետական ատյանների մոտ պատվաբեր չէ մեր հայ համայնքի համար և կուսակցականները իրենք պետք է վերլուծեն քաղաքականապես, թե որն է մեզ ձեռնտու՝ նման ձևով խայտառակ լինելը, թե երկու ոչ դաշնակցականի ներկայությունը հանդուրժելը և համայնքը երկպառակտվելուց հեռու պահելը: Այստեղ իր մեղքի բաժինը ունի նաև Սրբազան Հայրը, որը աչք է փակում բոլոր նման երևույթների նկատմամբ և չի կատարում իր հայրական առաքելությունը համայնքում, որի հետևանքով օր ըստ օրե շատանում են բողոքները նման երևույթների հանդեպ: Հարկ է նշել, որ ընտրություններին մասնակցում էին 48 պատգամավորներ ու հոգևորականներ, որոնցից 9 հոգին սպիտակ թերթիկ հանձնողներն էին:

Թեմական Խորհրդի անդամ ընտրվեցին հետևյալ անձնավորությունները՝ 1-Դկտ. Աիդա Հովհաննիսյան, 2- Սևան Դանիելյան, 3- Արա Շահվերդյան, 4- Թաթուլ Եադգարյան, 5- Վայիկ Շահնազարյան, 6- Կարինե Ղարախանյան, 7- Դարվին Ավագյան, 8- Դկտ. Հրաչ Խաչատրյան, 9- Ռուբիկ Սարխուշյան, 10- Սարո Մկրտչյան և 11- Հայկ Տեր Ղուկասյան: Ձևական թեկնածու անհատներ էին ներկայցվել 1-Վրեժ Հայրապետյանի, 2-Հենրիկ Ղանբարյանի, 3- Էդմոնդ Աբեդիի և 4- Հայկ Մկրտչյանի անունները:

Սեպուհ արք. Սարգսյանի կարծիքը 14-րդ Պատգամավորական Ժողովի քառամյա գործունեության նախագծի մասին

ԹՀԹ-ի Պատգամավորական Ժողովի 5-րդ նիստի ժամանակ ՊԺ-ի քառամյա գործունեության նախագծի օրակարգի քննարկումից առաջ Սրբազան Հայրը արտահատեց իր կարծիքը այդ կապակցությամբ, որի բովանդակությունը ներկայացնում ենք ստորև:

«Բարձր եմ գնահատում պատգամավորների նախանձախնդրությունը առաջիկա չորս տարիների գործությամբ հետաքրքրությունը և հետապնդումը: Որպես առաջնորդ, ուզում եմ պնդել, որ կյանքը կարգ ու կանոնով է առաջ գնում, մենք էլ կարգ ու կանոնով պետք է առաջ գնանք և այդ կարգ ու կանոնը ազգային սահմանադրության մեջ եկած է և դրա կարևոր հատկանիշը ժողովրդավարական սկզբունքն է: Ազգը և անհատը փոխադարձ կարգով կապված են մեկը մյուսի հետ և նրանք իրենց պարտականություններն ունեն մեկը մյուսի նկատմամբ: Հիմա կյանքի պայմանները փոխվել են և մեր կանոնագրությունը տարիներ առաջվա պայմանների համար է գրված և չի համապատասխանում մեր նոր պայմաններին և մենք պետք է մեր կանոնագրությունը վերանայման ենթարկենք: 10 տարի է, որ այստեղ եմ և դրա անհրաժեշտության մասին միշտ ասել եմ տարբեր ժողովներում: Մինչև դրա վերանայումը մեր գործընթացը կարևոր է: Երբ Թեմական Խորհուրդը տարբեր տնտեսական հարցեր է բերում այստեղ, որ կանոնագրությամբ չի նախատեսված, բայց անպատեհություն չի լինում, որ մենք հանձնաժողովներ ունենանք ուսումնասիրությունների համար, որոնց արդյունքները կփոխանցվի գործադիր իշխանությանը: Մենք այս սկզբունքով կառաջնորդվենք: Առաջին հերթին մեր առաքելությունը մեր կանոնագրության վերանայման հարցն է: Մենք պետք է գտնենք մարդիկ, որ մեր եկեղեցու կյանքի հետ առնչված են, ի վերջո մենք ազգային եկեղեցական մարմին ենք և այդ տեսանկյունից պիտի աշխատենք: Կանոնագրության նախագիծը պատրաստելուց հետո 3-4 օր անընդմեջ նիստ պետք է ունենանք և հոդված առ հոդված պիտի կարդացվի, քննարկվի և վավերացվի ու Կիլիկիո Կաթողիկոսություն ուղարկվի՝ ընդհանուր ժողովի և կենտրոնական վարչության կողմից վավերացման համար: Այս նախագիծը հետաքրքիր նախագիծ է, բայց իմ պատկերացումով մենք մեր գաղութի կյանքով պիտի հետաքրքրվենք, հետո առաջարկներ անենք, քննարկենք և այլն»:

ԹՀԹ-ի Պատգամավորական Ժողովի 5-րդ նիստը

Մաս 2

14-րդ Պատգամավորական Ժողովի քառամյա գործունեության նախագծի շուրջ պատգամավորների միջև լայն կերպով կարծիքների արտահայտություններ տեղի ունեցավ: Սկզբից դիվանի անդամ էմիլ Մնացականյանը բացատրություններ տվեց այդ նախագծի շուրջ և ասաց, որ լուրջ քննարկումներ են տեղի ունեցել այդ նախագծի շուրջ և Թեմական Խորհուրդը և Սրբազան Հայրը հայտնել են իրենց կարծիքները և նրանք որոշ դիտողություններ են արել: Ապա առաջարկեց գլուխ առ գլուխ ընթերցվի և ընդհանուր մտքերի փոխանակում լինի տվյալ գլխի կապակցությամբ: Հիմնական վեճը գնում էր հանձնախմբերի կյանքի կոչման մասին, մեծ մասամբ պատգամավորները գտնում էին, որ հանձնախմբերի կյանքի կոչումը անհրաժեշտ է և դա կօգնի համայնքային որոշ հարցերի շուրջ կատարել որոշ մասնագիտական ուսումնասիրություններ, որոնք դիվանի միջոցով կներկայացվի մեր գործադիր մարմին՝ Թեմական Խորհրդին: Որոշները գտնում էին, որ, եթե ճիշտ մեխանիզմ չկիրառվի, ավելի շուտ կարող է խանգարել Թեմական Խորհրդի աշխատանքներին: Նշվեց, որ անցյալում ՊԺ-ում

հաստատվել է հանձնախմբային աշխատանք տանելու ձևը, սակայն, քանի որ ժամանակի ՊԺ-ի դիվանի և Սրբազան Հոր ու ԹԽ-ի ցանկությամբ չի եղել այդ որոշումը, այնքան էլ ընթացք չի տրվել այդ գործընթացին և կամ կյանքի չեն կոչվել որոշված հանձնախմբեր, կամ էլ՝ անուշադրությանն են մատնվել, օրինակ, կյանքի էր կոչվել հասարակական հարցերի հանձնաժողով և ՊԺ-ի դիվանը պարտականություն ուներ հրավիրելու և հանդիպում կազմակերպել այդ հանձնախմբի անդամներին, որոնք իրենց հերթին պետք է ներքին պատասխանատվությունների բաժանում կատարեին, սակայն երբեք այդ հրավերը և հանդիպումը չեղավ: Կամ՝ մյուս հնձնախմբերը նաև ենթարկվեցին ՊԺ-ի և ԹԽ-ի անուշադրությանը: Պատգամավորները հույս հայտնեցին, որ, եթե այս շրջանում կյանքի կոչվեն նման հանձնախմբեր, նախորդի ճակատագրին չարժանանան: Նշվեց, որ այդ հանձնաժողովների կյանքի կոչմամբ ՊԺ-ն ավելի ակտիվ դեր է կարող ունենալ մեր համայնքային կյանքում: Թեմական Խորհրդի ատենապետ դկտ. Ահդա Հովհանիսյանի մտահոգությունը այն էր, որ, եթե հանձնախմբերը կյանքի են կոչվում և ուսումնասիրություններ են կատարում և ինչ-որ եզրակացությունների են հասնում, չպետք է նրանք այդ հարցը ուղղակի ՊԺ-ի դիվանի միջոցով ՊԺ-ի քննարկման հարց դարձնեն և ավելի շուտ դա պետք է ներկայացվի Թեմական Խորհրդին և եթե Թեմական Խորհուրդը հարմար նկատի, հետո դրվի ՊԺ-ի քնարկմանը: Նա այս միտքը հիմնավորում էր այսպես.- «Մենք ենք, որ առօրյա հարցերի» հետ շփվում ենք ու տիրապետում բոլոր ինֆորմացիաներին: Այս հիմնավորումը չէր ընդունվում պատգամավորների մեծամասնության կողմից, որոնք նշում էին, որ իրեք էլ կտրված չեն համայնքի կյանքից և ժողովրդի հետ իրենց շփումները ավելի շատ է՝ քան ԹԽ-ինը, միգուցե ԹԽ-ն իր առաջարկները ուենա հարցերի առաջնահերթությունների մասին, որոնց շուրջ կարելի է խոսել, սակայն այդ հիմնավորումը մի տեսակ ցենզուրայի նման մի բան կստացվի:

Ինչպես տեղյակ եք այս նիստը տեղի էր ունենում՝ Հայաստանում եղած մի շարք անցուդարձերից հետո, դրանցից կարելի է նշել Հայ-Թուրքական հարաբերությունների շուրջ ծավալված երկխոսությունները և տարբեր մեկնաբանություններն ու եզրակացությունները, տարբեր դիրքորոշումները և ՀՅ Դաշնակցության Հայաստանի իշխանության կոալիցիայից դուրս գալը: Դաշնակցությանը հարող որոշ պատգամավորներ չկարողացան իրենց զսպել և օրակարգից դուրս չարտահայտվել ու նրանցից մեկը, օրակարգը խախտելով, այսպես արտահայտվեց.«Հայ-Թուրքական հարաբերություններ են տեղի ունեցել, որտեղ ստորագրվել է պայմանագիր: Որևէ պայմանագրի ստորագրում Մեծ Եղեռնի ոգեկոչման նախօրյակին դատապարտելի է: Թուրքիան հայտարարություններ է արել: ՀՀ նախագահը քանի ժամանակ առաջ այստեղ էր և ասել էր, որ Թուրքիայի հետ հարաբերություններում ցեղասպանության և Արցախի հարցը նախապայման չէ, բայց կարծես այսպես չէ, ի պատիվ մեզ մեր Թեմական Խորհրդի ատենապետի դկտ. Ահդա Հովհանիսյանը ապրիլ 24-ի միջոցառման ժամանակ հայտարարություն արեց և դատապարտեց դա և Սրբազան Հայրը նաև նույն օրը «Արարատ» մարզավանի սրահում դատապարտեց ու իր մտահոգությունը արտահայտեց: Հիմա մենք, որպես համայնքի գերագույն մարմին, ինչ պիտի անենք, արդյոք պիտի բողոքե՞նք, արդյոք պիտի ցույց կազմակերպե՞նք Հայաստանի դեսպանատան դեմ կամ Սփյուռքի նախարարության դեմ»:

Հակառակ մեր կուսակցական պատգամավորին, պատգամավորներից մեկը ձայն վերցնելով ասաց քանի որ առիթ է տրվել օրակարգից դուրս նման մի արտահայտության պետք է իրավունք տրվի դրան դեմ արտահայտվելու, և իրավունք վերցնելուց հետո ասաց.«Առաջին հերթին այս հարցը օրակարգից դուրս էր և չպետք է իրավունք տրվեր արտահայտվելու, Հայ-Թուրքական հարաբերությունները Մեծ Եղեռնի ոգեկոչման նախօրյակին չի սկսվել և դա մի գործընթաց է եղել, որին համաձայն է եղել նաև Դաշնակցությունը, մեր սիրելի պատգամավորը լավ տեղեկացված չէ, որևէ պայմանագիր չի կնքվել և միայն մի ընդհանուր հռչակագիր կամ համաձայնագիր է ստորագրվել նորմալ հարաբերություններ ունենալու կապակցությամբ առանց որևէ նախապայմանի: Սա կուսակցական ժողով չէ, որ նման գնահատականներ է տրվում և արտահայտություններ է արվում, թե ինչ պիտի անենք՝ ցույց անենք և այլն, Պատգամավորական ժողովը չպետք է շփոթել կուսակցական ժողովի հետ: Այս թեման քննարկման մեծ նյութ է և մի երկու րոպեում նման գնահատականներ տալն ու արտահայտություններ անելը ճիշտ չէ»:

Այս թեմայի շուրջ Թեմի Առաջնորդը՝ Սրբազան Հայրը զգաց, որ ինչ-որ բան պետք է ասի, այդ իսկ պատճառով նիստի ավարտին այս կապակցությամբ արտահայտվեց ու ասաց հետևյալը՝ «Ես սկզբից պետք է այս կապակցությամբ խոսեի և մոռացել էի և հիմա կասեմ: Այս օրերում Հայաստանում, Արցախում և Սփյուռքում շատ կրիտիկական և ճակատագրական պահերի մեջ ենք: Սա որևէ մի կուսակցության սեփականությունը չէ, երեք ավանդական կուսակցություններն էլ իրենց մտահոգություններն հայտնում են: Մենք սպասողական վիճակի մեջ ենք, արևմտյան Հայաստանը նաև մեր հայրենիքն է, որը գրավված է Թուրքիայի կողմից և մենք ազգովին մտահոգվելու իրավունք ունենք: Ես կխնդրեմ, որ մեր ժողովականները այս ուղղությամբ մեր մտածումները և խորհրդակցությունները իրար հետ ունենան: Մի բան պիտի չմոռանանք, որ, ինչ էլ լինի, մենք մեր հայրենիքը ամեն բանից վեր կդասենք, կա 1.5 միլիոն Հայոց Ցեղասպանության հարց, աղոթենք մեր պատասխանատուների համար, ազոթենք նաև Թուրքերի և ազերիների համար, որ Աստված նրանց միտքը լուսավորե, որպեսզի իրենք էլ խղճի խայթ զգան: Բայց, նախքան դա մեր ղեկավարության համար աղոթենք՝ նախագահից սկսած, որ Աստված իրենց ուժ և իմաստություն տա, որպեսզի կարողանան այս տագնապահար պայմաններում մեր ժողովրդին ճիշտ ձևով ուղեկցեն»:

Սրբազան Հոր խոսքերից հետո ավարտվեց ՊԺ-ի 5րդ նիստը:

ՌԱՄԿԱՎԱՐ-ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆ

Նոր ստեղծվող Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության, ՀՌԱԿ-ի եւ Հայաստանում ռամկավարական շարժման խնդիրների շուրջ իր պարզաբանումներն է ներկայացնում «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը:

- Պարոն Ավետիքյան, մամուլում, մասնավորապես, մեր թերթում եղել է անդրադարձ նոր ստեղծվող Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության շուրջ սկսված խմորումներին: ՀՌԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանը մեղադրում է Ձեզ, որ օտարերկրյա քաղաքացի լինելով փորձում եք նոր ռամկավար կուսակցություն ստեղծել:

- Սկսենք նրանից, որ ես քսան տարի ապրում եմ Հայաստանում, 1991-ի փետրվարի 16-ից քաղաքական օրաթերթ եմ հրատարակում եւ այդ թերթի

բաժնետերերից մեկն եմ: Այսինքն ես 19 տարի քաղաքական կյանքի մեջ եմ: Այդ կապակցությամբ Հարութի արտահայտած մտքերն ուղղակի անհեթեթ են եւ խիստ ուշացած, առնվազն 19 տարով: Դեռեւս 1994 եւ 1996 թթ.-ին, նախ Վիգեն Խաչատրյանը եւ ապա Վարդան Պետրոսյանը հրապարակավ պահանջել էին ՀՀ առաջին նախագահից, որ ինձ արտաքսեր երկրից: Քաղաքական առումով ո՞ւր են հիմա այդ մարդիկ. դարձել են փոշի, եւ առանց իմ օգնության: Հարութին սպասում է միեւնույն ճակատագիրը, դարձյալ առանց իմ օգնության: Ի դեպ, Հարութը ինձ մոտ աշխատել է 6-7 տարի առաջ, հիմա նո՞ր է գլխի ընկնում, որ ես օտար երկրի քաղաքացի եմ: Բացի այդ, կարելի է դիմել կուսակցությունների պետական գրանցումն իրականացնող համապատասխան պետական կառույցին եւ տեղեկանալ, թե արդյոք իմ անունով, ստորագրությամբ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցություն հիմնադրելու հայտ ներկայացվա՞ծ է, թե՞ ոչ: Ձեզ ավելորդ նեղություն չպատճառելու համար կարող եմ ասել, որ իմ անունը չկա նոր կուսակցության հիմնադիրների ցանկում:

- Սակայն Դուք այսպես թե այնպես, ողջունո՞ւմ եք այդ ձեռնարկը:

- Իհարկե, ես քաջալերում եմ այդ կուսակցության ստեղծումը եւ դրա համար որեւէ մեկից, մանավանդ Հարութից, թույլտվություն չպիտի հարցնեմ:

- Այնուհանդերձ, սա Հայաստանում նոր ՌԱԿ ստեղծելու փորձ չէ՞:

- Իրավաբանական իմաստով սա նոր կառույց է, նոր կուսակցություն, որի գաղափարախոսությունը, անշուշտ, բխում է 1885-ին հիմնադրված առաջին հայ քաղաքական կուսակցության՝ արմենականների գաղափարախոսությունից, որի հիմքի վրա էլ հետագա տարիներին ստեղծվել են տարբեր կազմակերպություններ, այդ թվում՝ սփյուռքում տասնամյակներ շարունակ գործող Ռամկավար-ազատական կուսակցությունը: Այնպես որ, այս գործընթացն իրավական առումով ՀՌԱԿ-ի հետ կապ չունի, մանավանդ դեռ հարց է՝ արդյո՞ք ՀՌԱԿ, որպես այդպիսին, գոյություն ունի: Վերջին երեք տարիներին Հայաստանում երեք խոշոր ընտրություն է եղել՝ Ազգային ժողովի, հանրապետության նախագահի եւ Երեւանի քաղաքային ավագանու, որը նույնպես կարելի է գրեթե համապետական ընտրություն համարել: Այդ ընտրություններին ՀՌԱԿ-ը որեւէ ձեւով չի մասնակցել: Այնինչ Հարութը հայտարարում է, որ 20 հազարից ավել անդամ ունի, որով կարելի էր քաղաքական կյանքում զգալի դերակատարում ունենալ: Այսինքն թղթի վրա այդպիսի կուսակցություն միգուցե գոյություն ունի, բայց իրականում դա դեռ մեծ հարցական է:

- Բայց Դուք ինքներդ ՀՌԱԿ-ի հիմնադիրներից եք եղել:

- Այո, 1990-ից մինչեւ 1994-ը ՀՌԱԿ վարչության անդամ էի: Դրանից հետո մեր թերթում հրաժարականի հայտարարություն տալով դուրս եմ եկել ՀՌԱԿ-ից, որովհետեւ ճնշումներ կային կուսակցության նկատմամբ եւ ես այլ պետության քաղաքացի հանդիսանալով, դուրս եկա, որպեսզի կուսակցությունը հարվածի տակ չդնեմ: Սակայն ես մնում եմ սփյուռքում գործող Ռամկավար ազատական կուսակցության անդամ՝ սկսած 1977-ից:

- Ձեր ընդդիմախոս Հարություն Առաքելյանը նաեւ պնդում է, որ ՀՌԱԿ-ի «Ազգ» թերթը վերածել եք Ձեր սեփականության:

- Նախ՝ Հարութին ես ընդդիմախոս չեմ համարում, որովհետեւ այդ մարդը չունի այդ արժանիքը: Որեւէ հարթության վրա կարելի է բանավիճել միայն խելացի մարդու հետ: Իմ այս լուսաբանումները ուղղված են հասարակական կարծիքին: Ինչ վերաբերում է «Ազգին», ապա ինչպես Հայաստանում գոյություն ունեցող բոլոր թերթերը, մեր օրաթերթն էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, որը Հայաստանում տպագրվելու ողջ ընթացքում երբեւէ չի եղել ՀՌԱԿ-ի պաշտոնաթերթը: Հին լրագրողները լավ են հիշում 1996-ին «Ազգը» կուսակցական օրգանի վերածելու տխրահռչակ փորձը, որը ձախողվեց դատարանի որոշմամբ, հատկապես Հայաստանի լրագրողական ընտանիքի ճնշման ներքո: «Ազգը» ռամկավար-ազատական գաղափարախոսությամբ օրաթերթ է, բայց ոչ կուսակցության պաշտոնաթերթ: Այսպիսով, ես «Ազգ օրաթերթ» ՍՊԸ հիմնադիրն եմ, տնօրենը եւ թերթի բաժնետերերից մեկը: Թերթն այդ կարգավիճակով գրանցվել է պաշտոնապես, այստեղ քննարկելու հարց չկա: Հարութը եթե թերթ պահելու կարողություն ունի, թողի հիմնի իրը, ձեռքը բռնող չկա:

- Լավ, ամեն դեպքում ինչի՞ հետեւանք է այս խմորումը: Փաստ է, որ այն կա հայաստանյան ռամկավարների մեջ եւ այսպես թե այնպես առնչվում է ՀՌԱԿ-ին:

- Խմորումն արդյունք է այն իրողության, որ Հարութը զբաղված է կուսակցության ղեկավար լինելու միջոցով իր ապրուստը հոգալով, հացի խնդիր է: Դրա համար, անշուշտ, ավելի պարկեշտ միջոցներ կային, բայց ինքը նախընտրում է կուսակցության ղեկավար լինել եւ միաժամանակ այդ քողի տակ պատսպարվել: Իսկ պատսպարվելու պահանջ, թերեւս, ունի, որովհետեւ հուլիսի 8-ին, ժամը 11-ին Կենտրոն-Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ առաջին նիստը, որտեղ «Նաիրիտ» գործարանը հայց է ներկայացրել ընդդեմ Հարություն Առաքելյանի: Որովհետեւ 2003-ին նա հիմնել է մի ընկերություն, մի շարք գործարքներ կատարել «Նաիրիտ» գործարանի հետ, կուտակել է 6,5 մլն դրամից ավելի պարտք եւ քանի որ փողը չի վերադարձրել, «Նաիրիտ» գործարանը դիմել է դատարան: Մի կողմ թողնենք, թե ինչքանով է այսպիսի մարդն իր կերպարով համապատասխանում կուսակցության ղեկավար լինելուն, բայց այս ամենը շատ նման է կուսակցությունը իր համար օֆշորային գոտու վերածելուն, որովհետեւ

դատարանը պարզել է, որ Հարություն Առաքելյանն այսօր որեւէ կապ չունի այն իրավաբանական հասցեի հետ, որտեղ գրանցված է իր ընկերությունը: Որքանով տեղյակ եմ դատական նիստից, հանձնարարված է համապատասխան մարմիններին օրենքով սահմանված կարգով հետապնդում իրականացնել ու պարզել այս հարցը: Դրա համար էլ ես խուսափում եմ այս մարդու հետ որեւէ թեմայով բանավիճելուց, քանզի նա արժանի չէ: Չեմ էլ պահանջում, որ նա պատասխան տա, թե ինչպես եւ ինչու «ձեռքից բաց թողեց» ՀՌԱԿ կենտրոնական գրասենյակի ընդարձակ տարածքը Կորյունի 19 ա հասցեում:

- Սակայն ՀՌԱԿ-ն ունի անցած պատմություն: Դուք ՌԱԿ-ի անդամ եք 1977-ից, կուսակցությունը Հայաստանում վերականգնողներից մեկն եք եղել: Հետո շատ ջրեր հոսեցին եւ ահա ի հայտ է եկել Արմենական-Ռամկավար ազատական կուսակցություն ստեղծելու նախաձեռնությունը: Այդ կուսակցությունը որեւէ առնչություն ունենալո՞ւ է սփյուռքում գործող ՌԱԿ-ի հետ:

- Անշուշտ, ունի եւ ունենալու է: Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության հիմնադիր համագումարի հայտարարության մեջ նշված է, որ այս աշնանը սփյուռքի Ռամկավար-ազատական կուսակցության հետ պետք է կազմակերպվի միավորիչ համագումար կամ, ինչպես մենք ենք ասում, պատգամավորական ժողով: Որովհետեւ, դժբախտաբար, սփյուռքում Ռամկավար-ազատական կուսակցությունը պառակտված վիճակում է: Կուսակցության ԱՄՆ-ի արեւելյան շրջանի, Կանադայի, Լոնդոնի եւ ծանրակշիռ ձայն ունեցող Լիբանանի շրջանակները չեն ընդունում ՌԱԿ-ի վերջին պատգամավորական ժողովի արդյունքում ձեւավորված նոր վարչության լեգիտիմությունը: Մինչդեռ միայն Բեյրութում մենք 11 ակումբներ ունենք, դպրոցներ, մշակութային միություն, խորհրդարանում պատգամավոր, հսկայական կենտրոն, ուր տպագրվում է «Զարթօնք» թերթը: ԱՄՆ-ի եւ Կանադայի շրջանակներն ունեն իրենց լրատվամիջոցները եւ լոբբինգային հիմնական գործունեությունն էլ Հայաստանի օգտին այս շրջանակների կողմից է տարվում:

- Ինչո՞ւ է ստեղծվել այդպիսի վիճակ:

- Որովհետեւ բոլոր շրջանակները գրեթե առանց բացառության պահանջում էին, որպեսզի Ռամկավար-ազատական կուսակցության պատգամավորական ժողովը գումարվի Հայաստանում: Դրան դեմ էին մի փոքր խումբ մարդիկ, ովքեր Հորդանանի մայրաքաղաք Ամմանում իրենց ժողովը գումարեցին եւ ՌԱԿ ատենապետ վերընտրեցին Մայք Խարապյանին: Հիմա Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը մտադիր է նոր պատգամավորական ժողով գումարել Հայաստանում, որը լինելու է միավորիչ համագումար:

- Հիմա, փաստորեն, երկու ՌԱԿ վարչություն եւ երկու ատենապե՞տ գոյություն ունի սփյուռքում:

- Ո՛չ, նշածս փոքրաթիվ խմբի կողմից ընտրված Մայք Խարապյանն է հանդես գալիս որպես ատենապետ, որի լեգիտիմությունը չեն ընդունում ԱՄՆ-ի, Լիբանանի, Լոնդոնի, Փարիզի, Կանադայի մեր շրջանակները: Այս տարվա հունվարին նրան հրավիրեցինք Հայաստան, ես էլ եմ հանդիպել հետը եւ փորձել եմ բացատրել իրական վիճակը, որ անհրաժեշտ է նոր, միավորիչ համագումար անցկացնել, Երեւանում: Նա խոստացավ, որ իր ընկերների հետ կքննարկի այդ առաջարկը, բայց, թերեւս, ունի մտավախություն, որ այդ պարագայում ինքը չի վերընտրվի ատենապետ, քանզի Ռամկավար-ազատական կուսակցության մեջ իրենից շատ ավելի ծանրակշիռ անուն, վաստակ ու գործունեություն ունեցող գործիչներ կան բոլոր շրջանակներում: Թեպետ ես իրեն ասել եմ, որ կարեւոր չէ ով կընտրվի, այլ որ ՌԱԿ վարչությունն ու ատենապետը լինեն բոլոր շրջանակների համախոհությամբ ընտրված եւ կուսակցությունը կարողանա նորմալ կենսագործել: Որովհետեւ ՌԱԿ-ն առաջին եւ իրականում միակ ազատական կուսակցությունն է հայ իրականության մեջ եւ ափսոս է նման ավանդույթներ ու ցանցային կառույց ունեցող կազմակերպության անգործունեությունը::

- Ձեր նախաձեռնությունը շատ է նմանվում դաշնակցության ձեռնարկած քայլին եւ կուսակցության բյուրոյի գրասենյակն արտասահմանից տեղափոխվեց Երեւան: Նպատակ ունեք ՌԱԿ-ը դարձնել հայաստանակենտրո՞ն:

- Այո, եւ դա միակ ճիշտ ճանապարհն է: Մենք ՀՅԴ-ից ավելի վաղ, դեռ 1990-ի Մոնրեալում կայացած պատգամավորական ժողովում ենք ընդունել այդպիսի որոշում: Բայց ինչ-ինչ պատճառներով, նաեւ Հայաստանի այն ժամանակվա անկատար օրենսդրական դաշտը նկատի ունենալով, դա հետաձգվեց: Հիմա փորձում ենք այդ խնդիրը լուծել եւ դրան նպաստում է նաեւ պետությունը սփյուռքին բացվելու իր նոր քաղաքականությամբ, նաեւ երկքաղաքացիության մասին օրենքը:

- Ի դեպ, Հարություն Առաքելյանն այդ կապակցությամբ էլ նշել էր, թե հանրապետության վարչապետն է հովանավորում Ձեզ այդ հարցում:

- Հայաստանում բոլորն էլ գիտեն, որ երկրի գլխավոր դեմքը հանրապետության նախագահն է: Ընդունենք, թե իշխանությունն օժանդակում է մեզ այդ հարցում, բայց ի՞նչ վատ բան կա, եթե պետությունը նպաստում է, որ սփյուռքում գործող ավանդական կուսակցությունը, որն ինքնին ազգային արժեք է, վերամիավորվի, դառնա հայաստանակենտրոն: Այլ հարց է, թե ինչ ձեւով պետք է ղեկավարման խնդիրը լուծվի: Բազմաթիվ տարբերակներ կան, որոնք մենք կքննարկենք աշնանը կայանալիք միավորիչ համագումարում ու որոշում կընդունենք:

- Սակայն սփյուռքյան ՌԱԿ-ի շրջանակներն իսկապե՞ս ցանկանում են դա:

- Անկասկած, դա հենց սփյուռքյան շրջանակների ցանկությունն է: Ես վերջին շրջանում՝ այս տարվա գարնանը, հինգ գաղթօջախ եմ այցելել, հանդիպումներ անցկացրել ՌԱԿ-ի մեր շրջանակների հետ եւ բոլորի ցանկությունն այն է, որ կուսակցությունը դառնա հայաստանակենտրոն: Որովհետեւ սփյուռքում էլ բավականին բարդ իրավիճակ է: Տարբեր երկրներում ապրող հայությունը հաճախ դժվար կացության մեջ է հայտնվում, երբ այդ երկրների քաղաքականությունը դառնում է հակադիր: Օրինակ, Սիրիան ու Լիբանանը որոշ պրոբլեմներ ունեն այսօր, երկու երկրներում էլ ՌԱԿ-ն ունի իր կառույցները: Եթե կենտրոնը լինի Հայաստանում, ավելի հեշտությամբ կկարողանա համակարգել նման խնդիրները:

- Որքան հասկացա, Մայք Խարապյանի կողմնակիցները, իբրեւ հայաստանյան ռամկավարների միակ կառույց ճանաչում են ՀՌԱԿ-ին՝ ի դեմս Հարություն Առաքելյանի:

- Թերեւս, հնարավոր է, որ իրար ձեռք են լվանում: Բայց երբ Արմենական- Ռամկավար ազատական կուսակցությունը կգրանցվի եւ կնախաձեռնվի միավորիչ համագումար, Մայք Խարապյանին եւ իր կողմնակիցներին էլ հրավեր կուղարկվի՝ պատգամավորական ժողովին մասնակցելու: Եթե կհամաձայնեն, մենք միայն կողջունենք: Ցանկացած դեպքում համագումարը նախատեսել ենք անցկացնել աշնանը՝ սեպտեմբերին:

- Փաստորեն ստացվում է, որ ռամկավարական շարժումը Հայաստանում չկայացավ: 1990-ին ՌԱԿ-ը վերադարձավ հայրենիք, հաջորդ տարի ստեղծվեց ՀՌԱԿ-ը, հիմա նորից փորձում եք նոր բան ստեղծել:

- Ես այսպես կմեկնաբանեի, որ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունն այսօր փորձում է հավաքել ՀՌԱԿ-ի բեկորները: Կուսակցության նախաձեռնող խումբը ղեկավարում է Արմեն Մանվելյանը, որը Հայաստանում մեր առաջին կուսակցականներից մեկն է, դեռեւս երբ ՌԱԿ-ը նոր էր վերահաստատվում հայրենիքում նա «Արմենական» ակումբի ատենապետ ընտրվեց, իսկ դա մեր կուսակցական առաջին օղակներից մեկն էր հայրենիքում՝ ՌԱԿ-ի գործունեությունը վերսկսելուց հետո: Նա հիմնադիրներից է ՀՌԱԿ-ի՝ վերջինիս գրանցման պահից: Այսինքն Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունն այսօր հիմնադրող մարդիկ կանգնած են եղել Հայաստանում ռամկավարական շարժման վերականգնման ակունքներում եւ մինչեւ 2003-ը եղել են ՀՌԱԿ-ի շարքերում: Ընդհանրապես բոլոր նրանք, ովքեր ՀՌԱԿ-ից դուրս գալուց հետո այլ կուսակցության չեն անդամակցել, կարող են դիմում ներկայացնել ու անդամագրվել Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությանը:

- Նոր կուսակցություն ստեղծելու փոխարեն ավելի ճիշտ չէ՞ր լինի ՀՌԱԿ-ի պատգամավորական ժողով հրավիրել եւ ատենապետի պաշտոնից հեռացնել Հարություն Առաքելյանին, եթե համարում եք, որ նա վատ է կառավարում կուսակցությունը:

- Ոչ ոք չի ցանկանում այդ մարդու հետ այլեւս գործ ունենալ: 2003-ից ատենապետ դառնալով նա իր բոլոր հնարավոր ընդդիմախոսներին տարբեր պատճառներով ուղղակի հեռացրել է կուսացությունից, խախտելով կուսակցության կանոնադրությունը: Ըստ որում, կանոնադրության կոպիտ խախտմանը այն ժամանակ ուշադրություն չդարձրեց կուսակցությունը գրանցող մարմինը: Երկու ուրիշների հետ համաատենապետ դառնալուց հետո (տրիումվիրատ՝ որի մյուս երկու անդամներին Հարութը խարդավանքով չեզոքացրեց ավելի ուշ) նա առաջին իսկ օրը կուսակցությունից հեռացրեց հինգ հոգու, այդ թվում՝ ՀՌԱԿ հիմնադիր ատենապետ Ռուբեն Միրզախանյանին, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նախկին տնօրեն Լավրենտի Բարսեղյանին: Հայ դատի համար պայքարող կուսակցության ղեկավարին հարի՞ր պահվածք է սա: Մանավանդ որ Ռուբեն Միրզախանյանը հրապարակավ հայտարարել էր արդեն, որ հրաժարվում է կուսակցությունում ունեցած բոլոր պատասխանատվություններից ու մնում է շարքային անդամ:

Այսինքն սա մի գործելաոճ է, որի դեմ ՀՌԱԿ-ի ներսում պայքարելը ենթադրում է շարունակական քաշքշուկ : Մինչդեռ նոր կուսակցություն հիմնելը շատ ավելի տրամաբանական է ու նպատակահարմար, մանավանդ որ այն հիմնում են հին ռամկավարները: Բոլոր նրանք, ովքեր վերջին շրջանում եկել են անդամագրվելու Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությանը, առաջին հերթին պահանջ էին դնում, որ Հարութը որեւէ առնչություն չունենա այս նախաձեռնության հետ: Մանավանդ որ, ՀՌԱԿ՝ որպես քաղաքական ակտիվ կառույց, գոյություն չունի:

- ՀՌԱԿ ատենապետը հակառակն է պնդում, ո՞րն է չգոյության Ձեր հիմնավորումը, այն, որ կուսակցությունը երեք ընտրությունների չի՞ մասնակցել:

- Իսկ դա քի՞չ է: Ի դեպ, Հայաստանի օրենսդրությամբ, եթե քաղաքական կուսակցությունը երկու խորհրդարանական ընտրությունների անընդմեջ չի մասնակցում, ինքնաբերաբար լուծարվում է եւ վերածվում հասարակական կազմակերպության: Այսինքն, մեր մտավախություններից մեկն էլ այն է, որ հաջորդ ընտրություններից հետո Հարութի շնորհիվ մենք կկանգնենք նաեւ այդ փաստի առջեւ, երբ ՀՌԱԿ այլեւս գոյություն չի ունենա ու ամեն ինչ հարկադրված կլինենք սկսել զրոյից: Դե, եթե այդպես է, ավելի լավ է սկսել հիմա, քան 2012-ին: Հարութները չեն, որ պետք է որոշեն 124 տարի գոյություն ունեցող կուսակցության ճակատագիրն ու նրա զարգացման հեռանկարները: Նա փոքր մարդ է:

Զրուցեց ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Խոհեր

Մեր անցած ճամբան
Աբադան

Թ. Ղարախանյան Միրակցի

Մինչև 12-րդի դիպլոմի լուրջ քննությունների տարիներին, պատանիներս ամեն առիթից օգտվում և խաղում էինք: Բանվոր դասակարգի պատանիներիս համար ամառվա այդ կրակոտ օրերին, որ լրիվ աշխատավորները միայն կես օր էին աշխատում առավօտյան 6:30 ից մինչև կեսօրվա 2-ին տուն վերադառնում և հանգստանում:Մեր զբաղմունքի և խաղի վայրը, բլուրներն էին: Մի տեղ ձորի մեջ, մի ավազոտ տեղ էինք գտել որ նաֆտ ու ջրով խառը փոքրիկ գետակ էր անցում և դրա ափին մի մեծ հողաբլուր շվաք էր գցում և բլուրի դոշին 3-4 մետրանոց քանդված՝ ներս գնացած տեղ կար ուր տղերքս բարձրանում էինք ու գրեթե երևայական լողի ավազանի գլխից թռչում էինք ներքև՝ ավազների վրա, հետո չափում թե ով կարող էր ամենից հեռու թռչել: Անհամ փոքրիկ խաղերից որ անցնենք, տղաների մյուս խաղերից էին Ֆուտբոլ, դաջ բալ, վալիբալ, ՁՈՒԲ ՔԻԼԻ կամ ՁՈՒ-ՈՒ որ ճիշտ Ամերիկյան “Base-ball”-ի էր նմանում միայն գնդակի փոխարեն 20 սանտիմետրանոց փայտից էինք օգտվում և վազելու ընթացքում էլ ՁՈՒ էինք կանչում առանց շունչերս կտրելու, մինչև փոքր փայտը իր զարկած տեղին հասցնեինք կամ գցեինք մինչեւ մեր թիմի ընկերը առանց բռնվելու վազի ու տեղ հասցնի: Աղջիկների խաղերն էին քարոջ, պլան-պուտիկ և այս ամենը առանց փողի էին կատարվում:

Միջնակարգ դպրոցի 12-րդ տարին վերջացրինք և մեզ երեք ամիս ժամանակ տրվեց քննություններին պատրաստվելու համար:Բանվորի զավակները ավելի սահմանափակ վիճակում էին, ամեն տեղ փողոցներում որ գիշերը լուսավորվում էր, անպայման հայ կամ պարսիկ աշակերտներ լույսի տակ քննության համար դաս էին սովորում ապա երբ հոգնում էին փողոցի մեջ լույսի տակ քնում կամ քնելու համար տուն եին վարադառնում: Վիճակը բարելավելու համար քանի դասընկերներով որոշեցինք ծնողների տված փողերով քանի հոգով մի մեծ սենյակ վարձենք, որ մեկ սենյակի մեջ սովորենք, քնենք, արթնանաք, նաֆտի ճրագով թեյ պատրաստենք եւ մեր տներից էլ շատ հեռու չլինենք, որպեսզի մեր ծնողների կերակուրները ճաշակելով մեր բոլոր ժամը հատկացնենք մեր դասերին: Ապրիլ և մայիս ամիսներին արդէն շոգը ահավոր էր եվ կայծ էլ չունեինք եվ նաֆտի լույսով մինչև կես գիշեր կարդում՝ սովորում:

Այսպէս բոլոր 3 ամիսները սովորեցինք, լավ ու վատ անցավ եւ բարեբախտաբար շատերս որ թվաբանության ճյուղ էինք ընտրել, դիպլոմը ստացանք: Ապա սկսեցիք որևէ կերպով աշխատանք գտնենք, փող աշխատենք և մեր ընտանիքների կողքին կանգնենք մինչև կանչվենք զինվորություն:

Նաֆտի Ընկերությունը սկսեց դանդաղորեն աշխատողներին փոխադրել Ահվազ և Թեհրան քաղաքները. շատերին էլ պատասխանեց, իհարկէ նկատելի էր, որ այդ տարիներին Աբադան հսկա քաղաքը որտեղ միայն Պարսկաստանի նաֆտի զտարանն էր աշխատում, կենտրոնական ուշադրությունից դուրս էր մնում և չէինք գուշակում թե ինչ ճակատագիր էր սպասում Աբադանի հայ ժողովրդին, որովհետև Աբադանի Նաֆտի զտարանը հին տարիներից նույնն էր մնացել և որևէ զարգացնելու ծրագիր չկար և պարզորեն լինում էր գուշակել որ նոր աշխատատեղեր չէին ստեղծվում և գնալով զտարանի մարդույժն էին պակսեցնում, արդէն քանի տարի էր անցել Աբադան կղզին և Խոռամշահր նավահանգիստ քաղաքի կամրջի շինարարությունից հետո Նաֆտի Ընկերությունը որևէ նոր բնակարաններ չէր սարքում: Արդեն կարելի էր գուշակել որ Նաֆտի Ընկերությունը հանդարտորեն նվազեցնում էր աշխատավորների թիվը և այսպիսով հայ մարդը ցավ էր զգում երեվակայել Աբադան քաղաքի հայահոծ մշակույթային կենտրոնը առանց հայության: Իրավի որ այդ տարիներին Աբադան քաղաքը կարելի էր համարել եռուզեռով ու աշխատավորնրով ճոխ մի զարգացած եվրոպական քաղաք, Պարսկաստանի հարավային քաղաքների ՀԱՐՍ-ը:Մի զարմանալի հարազատություն կար հայ և պարսիկ համայնքների միջեւ: Երբեք մեկի մտքով չէր անցնում որ հայկական գյուղերի արտագաղթը կրկնվեր, հատկապէս, Աբադան քաղաքի հայության համար: Հայ մարդու համար հարցը մնում էր նունը՝ « որտեղ հաց այնտեղ կաց » և այդպէս էր որոշվում Պարսկաստանի հարուստ «Խուզեստան» նահանգում Հայ մարդու ապրելավայրը այսինքն՝ Նաֆտի Ընկերությունում աշխատատեղի լինել- չլինելու շնորհիվ:

Շար. 7

Մշակույթ

Հայ–Իրանական դիվանագիտական առնչությունները
(Պատմական համառոտ ակնանկ)

Դր. Էդ. Բաղդասարյան
www.Edic-Baghdasarian.com
edbagh@gmail.com

Դիվանագիտությունը Հայաստանում ձեւավորվել է պետականության սկզբնավորմանը զուգընթաց՝ մյուս պետությունների, ցեղերի ու ժողովուրդների հետ քաղաքական, տնտեսական հարաբերություններ հաստատելու ընթացքում: Հին ե միջնադարյան Հայաստանի միջազգային պայմանագրերի, պետական գրագրությունների, հավատարմագրերի օրինակներ պահպանվել են արտասահմանյան երկրների դիվաններում: Հայ դիվանագիտության մասին տվյալներ են պարունակում տարեգրությունները, հռոմական, հունական, արաբական, պարսկական եւ այլ աղբյուրները: Հայկական պետությանը մտահոգել է երկրի հզորության ամրապնդումն ու բազմապատկումը, աշխարհակալ պետությունների հետ հավասարակշռության ստեղծումն ու պետական ինքնուրույնության պահպանումը: Զորեզ պետությունների քաղաքական ու ռազմական բախումների հանգուցակետում հայկական պետությունը փորձելով օգտագործել հակառակորդ կողմերի հակասությունները, դաշնակցել է մեկ այս, մեկ մյուս կողմի հետ:[1]

Պայմանագրերի միջոցով պետությունների հետ քաղաքական ե տնտեսական հարաբերություններ հաստատելու կամ բախումներ լուծելու փորձը Հայաստանում կիրառվել է դեռևս մ. թ. ա. II հազարամյակի 2-րդ կեսին: Հայ ժողովրդի կազմավորման շրջանում հարևան պետությունների ու ժողովուրդների, մասնավորապես, խալդայների հետ պայմանագրային հարաբերությունների մասին է վկայում Քսենոփոնը «Կյուրոպեդիա»-ում: Քաղաքական եւ տնտեսական հարցերի ընդգրկմամբ միջազգային հարաբերությունների ոլորտում պայմանագրային հարաբերությունների նշանակությանը հատկապես մեծացել է Մեծ Հայքի պետության կազմավորումից հետո: Տերիտորիալ, ազգային անկախության համար մղվող պայքարի տարիներին հայկական պետության հիմնական նպատակը կայուն խաղաղության հաստատումն էր, որին նա հասել է զինադադարների, հաշտության, պայմանագրերի միջոցով: Այդ պայմանագրերով լուծվել են կողմերի միջև

[1] - ՀԱՀ, հ 3, էջ 404:

խաղաղության վերահաստատման, քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ խնդիրներ: Հին և միջին դարերում այլ պետությունների հետ Հայաստանի կնքած պայմանագրերի հիմնական նպատակը ուժերի հարաբերակցության պահպանումն էր կամ վերականգնումը:[2]

Հայաստանը օտար պետությունների հետ ռազմաքաղաքական դաշնակցային հարաբերություններ է հաստատել դեռևս մ. թ. ա. VII դարից:

Հայ-իրանական հարաբերությունները հազարամյակների պատմությամբ են օժտված: Արդեն մ.թ.ա. 7-րդ դ. (մ.թ.ա. 605թ.) Պարույր Սկայորդին օգնեց Մարաստանի Կիաքսարին՝ Ասորեստանի կործանման համար[3]: Հիշատակելի է, որ Տիգրան Երվանդյանը եղել է Կյուրոսի մերձավոր, որսակից ընկերը[4], որի շնորհիվ երկու երկրները ունեցել են բարիդրացիական հարաբերություն, անկախ այդ հանգամանքից, որ Հայաստանը ընհանրապես գտնվում էր Աքեմենյան Իրանի տիրապետության ներքո: Քսենոփոնի «Կյուրոպեդիա»–ում հիշատակվում է մ. թ. ա. 550-ական թթ. Աքեմենյան արքա Կյուրոսի հետ հայոց թագավոր Տիգրանի վարած քաղաքական բանակցությունների մասին:[5]

Դարեհ Ա Վշտասպյանի գահակալության ժամանակ (մ.թ–ա. 522-486 թթ.) երբ նա կամրապնդեր իր գահը, մի շարք երկրներ դուրս էին եկել Աքեմոնյանների հպատակությունից եւ անկախության դրոշ պարզել: Ապստամբ երկրների թվում էր եւ Հայաստանը: Աքեմենյանների դեմ ընվզած հայերին ճնշելու համար ուղարկված պարսից զորաբանակները ստիպված են եղել մի քանի ամիսների ընթացքում մղելու հինգ ճակատամարտ՝ երկուսը պարսիկ զորավար Վահումիսայի, իսկ երեքը՝ հայ զորավար Դադարշիշի հրամանատարությամբ:[6] Հետագայում հայերը իրենց դերն են ունենում պարսկական բանակում՝ օրինակ, մ.թ.ա. 480 թ. Հունաստան արշաված Քսերքսես արքայի բանակում կար նաեւ հայկական զորամաս[7]:

Երվանդունիները դաշնակիցներ են որոնել Սելեւկյանների դեմ, հովանավորել հակասելեւկյան ուժերը Մարաստանում եւ կապադովկիայում: Արտաշեսյանները դիվանագիտությունը դարձրել են պետության գործունեության բնագավառ:Հայ դիվանագիտությունը աչքի է ընկել հատկապես Տիգրան Մեծի եւ Արտավազդ Բ-ի օրոք: Երվանդունիների եւ Արտաշեսյանների շրջանում դիվանագիտության նպատակը աքեմենյան եւ սելեւկյան տիրակալների վարչական գործունեության հետեւանքների վերացումն էր, հայկական հողերի միավորումը մեկ միասնական պետության մեջ, իսկ Արշակունիների, հետագայում նաեւ Բագրատունիների շրջանում պետական ինքնուրույնության սահմանների ամբողջականության ապահովումը: Երկրի արտաքին քաղաքականության կնդիրները՝ օրինակ պարսկական եւ մյուսների հարձակումների կանխումը, Տիգրամ Բ Մեծը լուծել է այս կամ այլ երկրի հետ կայուն դաշնակցության հաստատելու, իսկ երբեմն տարածքային ժամանակավոր զիջումների միջոցով, օրինակ 70 հովիտների ժամանակավոր զիջումը պարթեւական Իրանին (մ.թ.ա. 95):[8]

Տրդատ Գ Արշակունիի օրոք դիվանագիտական կարեւոր քայլ էր քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն(301), որով Հայաստանը տարամերժվեց Պարսկաստանից ու Հռոմից դրսեվորելով ինքնուրույն քաղաքական գործունեություն ծավալելու վճռականություն:

Հավասարակշռության պահպանման, պատերազմից խուսափելու՝ քաղաքական գործիչների մտահոգության մասին է վկայում Արտավազդ Ե-ի նամակը պարսից Սասանյան Շապուհ Ա-ին, որով նա դիվանագիտական նրբությամբ պահանջել է ազատ արձակել հռոմի կայսր Վալերիանոսին:[9]

Հայ-իրանական քաղաքական հարաբերությունները կտրականապես սրվել են 5-րդ դարի կեսերին, երբ Սասանյան Հասկերտ Բ-ն փորձեց հայերին կրոնափոխ անել, որի հետեւանքով տեղի ունեցավ 451 թ. Ավարայրի ճակատամարտը, հետագայում Նվարսակի պայմանագիրը (484 թ.) պարսիկների հետ, ապահովեց Հայաստանի ինքնուրույն զարգացումը, Դվինի 506-ի եւ 554-ի ժողովնորում Հայոց եկեղեցին աջակցել է Պարսկաստանի հականեստորականերին իրենց պայքարում, քանի որ 484 թ. Պարսից քրիստոնեական եկեղեցին պաշտոնապես ընդունել էր նեստորականություն:[10]

7-րդ դարում արաբական արշավանքների հետեւանքով վերացվեց իրանի պետականությունը եւ դրա հետ նաեւ Հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունները: Սակայն հայերը իրենց դիվանագիտական գործունեությունը ծավալել են Պարսկաստանի նոր տիրակալների հետ, թեեւ նրաք արդեն պարսիկներ չէին, օրինակ հատկանշելի են 672-ին Թեոդորոս Ռշտունու կնքած հայ-արաբական պայմանագիրը, նաեւ ճկուն հայ-արաբական դիվանագիտական արդյունք էր 885-ին Հայաստանի անկախության նվաճումը եւ Աշոտ Ա Բագրատունուն թագավոր հռչակելը: Նա կարողացել է բնականոն հարաբերություններ պահպանել Արաբական եւ Բյուզանդական պետությունների հետ: Ապագայում երբ մոնղոլները գրավեցին Պարսկաստանն ու ողջ տարածաշրջանը, Կիլիկիայի Հայկական պետությունը 1254 թվականի հայ-մոնղոլական դաշինքով հաջողեց կանխել նրանց մուտքը Կիլիկիա:[11]

Հայկական պետականության վերացումից հետո ամբողջ վեց դարերի ընթացքում հայերը մեծ նշանակությամբ դերակատար են եղել Պարսկաստանի դիվանագիտական-միջազգային առեւտրի ոլորտում: 15-րդ դարի երկրորդ կեսին Իրանի Աղ–Ղոյունլու իշխան Ուզան Հասանը օսմանցիների դեմ միացյալ ճակատ կազմելու նպատակով, 1496 թ. Իտալիա է ուղարկում իր հավատարիմ սպասավոր եւ պաշտոնյա հայազգի խոջա Միրաքին (Մուրազ կամ Միրաթ)[12]: Նա 1470 թ. փետրվարին հասնում է Վենետիկ եւ բանակցության նստում Վենետիկի հանրապետության հետ: Ապա տեսակցություն է ունենում Հռոմի Պապի եւ Նեապոլի թագավորի հետ:

Շահ Աբբաս Մեծի օրոք հայերը չափազանց նշանակալից դեր են ունեցել երկրի քաղաքական եւ զինվորական կյանքում, նրանցից կարելի է հիշել մի

[2] - ՀՍՀ, հ 9, էջ 109:
[3] - Հայ ժողովրդի պատմություն, ՀԱԱ հրատ., հ 1, Երեւան 1971, էջ 432:
[4] - Հայ ժողովրդի պատմություն, ԵՊՀ հրատ., Երեւան 1985, էջ 34:
[5] - Կյուրոպեդիա, Քսենոփոն, թարգմ. Ա. Մուրադյան, Թեհրան, 1971:
[6] - Նույն տեղում, էջ 35:
[7] - Նույն տեղում, էջ 35:
[8] - ՀՍՀ, հ 3, էջ 405:
[9] - Նույն տեղում:
[10] - ՀՍՀ, հ 3, էջ 446:
[11] - ՀՍՀ, հ 3, էջ 406:
[12] - Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 187:

քանիսին: Շահը դափանափոխ քրիստոնյաներից ստեղծում է 15,000 հոգանոց հեծելազոր, որի կարեվորագույն մասն էին կազմում հայերը: Այսպես, նրանք ստրուկներ եւ ծառաներ էին եւ «Ղոլ» էին կոչվում, նրանց հրամանատարը Ղոլլար-Աղասի էր անվանվում: Շահ Սբբասի ամենանշանավոր սպարապետ եւ Ղոլլար-Աղասին էր հայազգի Ալլահվերդի խանը, որ Շահի կողմից շատ սիրված եւ հարգելի անձնավորություն էր: Նա նշանակվեց Ֆարս նահանգի իշխանաց իշխան (Ամիր-օլ-Օմարա) եւ ընդհանուր զորքի սպարապետ (1595 թ.), ապա Քոհգիլոյե նահանգն էլ անցավ նրա իշխանության տակ: Այնուհետեվ մինչեւ 1601 թ. Լարի մարզի եւ Օմմանի ծովափնյա շրջանների ու Բահրեյն կղզու իշխանությունն ստացավ[13]:

Ալլահվերդի խանի մահից հետո, Շահը Ֆարս նահանգի իշխանաց իշտանությունը հանձնեց նրա անդրանիկ որդուն՝ Էմամ–Ղոլի խանին, որը Լարեստանի կառավարիչն էր, իսկ մյուս որդուն՝ Դավուդ խանին նշանակեց Ղարաբաղի իշխանաց իշխան:[14]

Մյուս հայազգի գործիչներից էր երեվանցի Ղարչղայ Ղոլլար-Աղասին: Նրան իր ցուցաբերած քաջագործությունների եւ հավատարմության պատճառով, նշանակեցին երկրի սպարապետ, Ատրպատականի եվ Խորասանի իշխան եւ իր մահից հետո Խորասանի նահանգապետությունը հանձնեցին նրա որդուն՝ Մանուչեհր խանին[15]:

Յուսեֆ խանը վերոհիշյալ Ղարչղայ խանի մտերիմ ընկերներից, Շիրվանի իշխանաց իշխանն էր: Շահ Աբբասը հաճախ սիրալիր կերպով երկուսին միասին իր մոտ էր կանչում[16]:

Շահ Աբբասը բոլոր դեսպանական այցերին եւրոպական եւ արեւելյան երկրներ, օգտագործում էր հայերին, բարձր գնահատելով նրանց գիտելիքները տվյալ երկրի մասին: Օրինակ Նոր Ջուղայի քալանթարներ (քաղաքապետներ) Խոջա Նազար եվ Խոջա Սաֆրազը «Թագավորի խորհրդականներն» էին[17]: Նա հաճախ հայերից էր ընտրում իր դեսպաններին, օրինակ, Հակոբ Մարգարյան Ամեդեցի (1547 թ.)[18], առեստրական դեսպաններ ջուղայեցիներ Մարտիրոս, Տեր-Գաբրիել եւ Գալաբեկ[19]; Խոջա Սաֆարը Շահի դեսպանն էր Վենետիկում (1610 թ.)[20], եւ Յաղուբը (Հակոբ) Լեհաստանում ու Գերմանիայում (1616 թ.)[21], իսկ Շահ Սեֆին 1640 թ. Միրզա Մուսաբեգ անունով մի հայի Վարշավա է ուղարկում[22]:

Նադիր Շահ Աֆշարը (1688-1747 թթ.) մի խումբ հայերի, հակառակ իրենց կամքի, գաղթեցրեց Խորասան նահանգը, որպեսզի աջակցեն այդ շրջանի առեւտրի զարգացմանը: Մի խումբ հայեր ներգրավեց իր բանակում[23]: Թուրքերրի դեմ Նադիր Շահի պայքարում նրան դաշնակցել են Արցախի, Սյունիքի, Այրարատի հայերը[24]:

Հայասեր Քարիմ Խան Զանդից (1699-1779) հետո Աղա Մահմեդ խան Ղաջարն (1742-97 թթ.) է գահակալում: Սա եւս իր բանակում ուներ մեծ թվով հայեր, որոնք գլխավորապես ծառայում էին որպես թնդանոթաձիգներ[25]:

Ղաջարների (Կաջարների) հարստության տիրապետության նախնական ժամանակաշրջանում, նրանց ծառայել են բազմաթիվ հայեր, օրինակ, գեներալ Դավիթ Խան Սագինյանը, Ֆաթալիշահի ժամանակ Իրանի զորաբաժանումների հրամանատարն էր Ֆարս եւ Սպահան նահանգներում[26], Խուդադ-խան էրմենին (1781-1847), որը 1831-ից ստացել է խանության տիտղոս, դարձել Խոյի, Արդաբիլի, Ուրմիայի, Քերմանշահ եւ Իրաքի հրամանատար, 1844 թ. Թավրիզի կոռակալ[27], Կուլամ-Հյուսեյն խան Ֆաթալիշահի եվ հայուհի Խորիշանի (շահի 57-րդ կնոջ) դստեր՝ Մահ-Բեգումի ամուսինը, եղել է Իրաքի մարզպանի տեղապահ, 1824-ից սպարապետ[28]: Սուսիս խան (18-րդ դ. երկրորդ կես - 1820 կամ 1821) ռազմական գործիչ, թնդանոթաձիգների գլխավոր, ծառայել է Աղա Մահմեդ խանի եւ Ֆաթալի շահի ժամանակ, մասնակցել է բազմաթիվ ճակատամարտերի, թաղված է Ղազվինի հայոց եկեղեցու բակում[29]: Յուսուֆ-խան Ամիր Թոփխանե Գոլոյենց (ծն. 1783-85) ռազմական գործիչ, 19-րդ դարի Իրանի պատմության ականավոր դեմքերից էր[30]: Մարգար խան Դավիթխանյան, Ֆաթալի շահի գործակալը 1804-1848 թթ., Միր Դավիթ Մելիք Շահնազարյան Իրանի դեսպանը Փարիզում (1816), Դավիթ խան Դավթյանը Իրանի հյուպատոս Զմյուռնիայում, Վիեննայում եւ Պետերբուրգում, Ժան Դավութ խան (Հովհաննես Դավթյան) դիվանագետ, Սեթ խան Աստվածատրյանը Իրանի հատուկ պատվիրակ Լոնդոնում եւ Թուրքիայում, Աղազար խան Էնոկոլոպյան, Իրանի Հյուպատոս Թիֆլիսում, Վանում, Կարինում, Հին Բայազետում եւ այլուր, Նարիման Խան Էնոկոլոպյան, Իրանի դեսպանի խորհրդական Կ. Պոլսում, հյուպտոս Եգիպտոսում եւ դեսպան Վիեննայում, Միրզա Մելքոմ խան, Իրանի դեսպանը Լոնդոնում մինչեւ 1889թ., Բերլինի վեհաժողովի մասնակիցներից, Հովհաննես խան Մասեհյան, դիվանագետ եւ Իրանի դեսպան Լոնդոնում (1927) եւ Ճապոնիայում (1929) եւ շատ այլ քաղաքական այրեր[31]:

Շար. 1

Այսու մեր խորագգաց ցավակցություններն ենք հայտնում մեր սիրելի ընկեր, հասարակական ու մշակութային գործիչ,նվիրյալ հայրենասեր, հանգուցյալ՝

Մասիս Մաթյանի

Ցավալի վախճանման առթիվ:

«Լույս»-ի եւ «Ապագա»-ի խմբագրություն

---

[13] - نصرالله فلسفی ، زندگانی شاه عباس ؛ تهران ۱۳۶۹ ص ۴۳۰

[14] - Նույն տեղում, էջ 230:

[15] - Նույն տեղում, էջ 231:

[16] - نصرالله فلسفی ، زندگانی شاه عباس ؛ تهران ۱۳۶۹ ص ۴۳۲

[17] - Հ. Տեր-Հովհանյանց, Պատմություն Նոր Ջուղայի, 1880 էջ 48:

[18] - Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 353-354:

[19] - Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 419:

[20] - Պ. Լ. Ջեքյան, Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մեջ, ՊԲՀ, 1983, h1, էջ 105:

[21] - نصرالله فلسفی ، زندگانی شاه عباس ؛ تهران ۱۳۶۹ ص ۱۹۱۴

[22] - Ջ. Հանանյան, Հայոց դերը պարսից դիվանագիտության մեջ, Ալիք, Թեհրան, 1971, հոկտեմբերի 20:

[23] - اسماعیل رایین ؛ ایرانیان ارمنی ، تهران ۱۳۵۶. ص ۳۷-۳۶

[24] - Հայ ժող. Պատմություն, h 4, Երեւան 1972, էջ 178-192:

[25] - اسماعیل رایین ؛ ایرانیان ارمنی ، تهران ۱۳۵۶. ص ۳۸

[26] - Նույն տեղում, էջ 47:

[27] - Արծվի Բախչինյան, Ծագումով հայ են, Երեւան 1993, էջ 148:

[28] - Նույն տեղում, էջ 161:

[29] - Նույն տեղում, էջ 205:

[30] - Նույն տեղում, էջ 211:

[31] - Էդ. Բաղդասարյան, Թեհրանահայ գաղութի պատմություն, Թեհրան 2002, էջ 22-33: